ԳԼՈՒԽ IV

ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԱՌՆԻՈՒՄ

Գառնիում միջին բրոնզի դարաշրջանի մշակույթը հայտնի է և բնակատեղիի և դամբարանային նյութերով։ Այն ներկայացված է խեցեղենով։

Բնակատեղիում միջին բրոնզի մշակույթի շինարարական մնացորդներ չեն պահպանվել, ամրոցի՝ դարերի ընթացքում անընդմեջ վերաբնակեցման հետևանքով։

Սկսած 1950 թվականից միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն է հայտնաբերվել ամրոցի բոլոր չորս տեղամասերի մի շարք քառակուսիներում, տնտիկ շրջանի պարսպի հիմքերի և աշտարակների մոտ՝ ներսից և դրսից։

Նկատի ունենալով այն փաստը, որ միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն հայտնաբերվում է նաև անտիկ շրջանի պարսպապատից դուրս, կարելի է եզրակացնել, որ միջին բրոնզի դարաշրջանի բնակատեղին անտիկ ամրոցից ավելի լայն շրջագիծ է ընդգրկել։

Ամրոցում միջին բրոնզեդարյան նյութերը ձեռք են բերվել ոչ հստակորեն պատվող շերտերից։ Երկրորդ տեղամասի մի շարք քառակուսիներում 19 ա (1965 թ. № 16, դանվում է Գառնիի թանգարանում) 16 բ, (№ 1964/40), 20 բ. (№ 1964/44), 14 ա (№ 1964/45), 17 ա, 17 ժա, 20 ժ (1965 թ., № 10) միջին բրոնզեդարյան խեցեղենը հայտնաբերվել է վաղ բրոնզեդարյան մշակույթից վեր, 1,3—1,5 մ խորությունից, անտիկ շրջանի, երբեմն էլ միջնադարյան նյութերի հետ միևնույն։

Որոշ անկեր, օրինակ, առաջին տեղամասի 15 ա քառակուսում (1966 թ., № 14. 17, 21, 36, 37) այն հայտնաբերվել է ուշ բրոնզեդարյան խեցեղենի և անտիկ շրջանի գունավարդ խեցեղենի հետ խառը։

Միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն հայտնաբերվել է նաև պարսպապատի հիմքերի և II, III, VI աշտարակների մոտ, 4,5 մ խորությունից։

Ամրոցից դուրս, Գառնի գյուղի տարբեր մասերում, միջին բրոնզեդարյան դամբարանային նյութերը հայտնաբերվել են պատահարար՝ հողային աշխատանքների ժամանակ։ Նրանց մի մասը բացվել է գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասում, կոլխոզի դոմերը մոտ, մյուսը՝ գյուղի արեմտյան մասում՝ Արտաշատ տանող խճուղու եզրերին։ Այսպիսով, Գառնիի միջին բրոնզեդարյան բնակատեղիի դամբարանադաշտը բավականին լայնածավալ է եղել. սկսվել է նեղլիկ գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասից և ընդգրկել արեմտյան թաղամասերը։

Գյուղի հյուսիս-արեելյան մասում դամրարանտին նյութեր են հայտնարերվել իրարից ոչ հեռու երեք տարբեր կետերում։ Կոլխողի շորանոցների մոտ, 1949 թ. հողային տշխատանքների ժամանտկ հայտնարերվել է ըրնդամե իրանով խորը դորշադույն թաս (№ 1963/85)։ Դամրարանի կառուցվածքի և այլ նյութերի վերարերյալ ոչինչ հայտնի չէ։

Կոլխողի դոմերի մոտ, 1951 թ., հայտնարերվել են մոնոխրոմ թոշնաղարդ հիդրիա (տախա. VI, 1965/224) և շադանակագույն կճուճ՝ կետադիծ ղարդանախշերով (նկ. 94, № 1965/225)։ Այդ դամրարանի կառուցվածքի և նրանում հայտնարերված այլ նյութերի վերտերյալ ոչինչ հայտնի չէ։

Դարձյալ կոլխողի դոմերի շրջակայքում 1959 թ. կոլխողնիկ Ա. Ստեփանյանը տան հիմքերը փորելիս, րացել էր մի դամրարան և հանել նյութերի մի մասը։

Միջին բրոնզի ղարտշրջանի դամրարանների երկրորդ խումբը, ինչպես վերը նշվեց, տեղավորված է եղել գյուղի արեմտյան մասում, Արտաշատ տանող խճուղու շրջակայքում։

Այդ խճուղու եղրին, 1956 թ. հողային աշխատանքների ժամանակ գտնադարդ խորը թաս է հայտնարերվել, դարդարված դծածածկ թեք չեղանկյունների շղթայով (տախա. II, ներքեում, № 2098/4)։

1958 թ. նույն խճուղու եղրին, Նահապետ Սողոմոնյանի տան դիմաց՝ շրմուղի դիծր փորելիս, 0,8 մ խորության մեջ դտնվել է մի հիմնահողային դամբարան, որտեղ հայտնարերվել են տասներեք կավամաններ։ Այս դամրարանի վերաբերյալ այլ ավյալներ մեզ հայտնի չեն։

Նույն դամրարանադաշտում, տովից մոտ 200 մ դեպի արեմուտք, հայտնարերվել է հեատքրքրական, դորշադույն կրկնակճուճ, վերին թոսանման մասով և ուռուցիկ իրանով (№ 2100/11)։

Դամբարանադաշտի սահմանները հավանարար հասել են մինչե բնակատեղիի շրջակայքը, որտեղ ամրոցի մոտ 1949 թ., րակերից մեկում հայտնաբերվել է երկկոնիկ իրանով շադանակագույն կավաման, ուսերը ղարդարված ատամնաչար դրոշմիչով կատարված եռանկյուններով (աղ. XXXII։, № 1963/86)։

Չնայած դամրարանային նյութերում ամրողջական կոմպլեքսները քիչ են, սակայն որոշ դուդահեռների և տիպարանական համեմատությունների, մասամր վաղ բրոնզեդարյան խեցեղենի հետ ունեցած կապերի միջոցով կարելի է որոշել հայտնարեբված նյութերի տեղր միջին բրոնզի մշակույթում։

Բնակատեղիում միջին բրոնզի մշակույթր հայտնի է միայն խեցեղենի րեկորներով, ուստի այն այստեղ կներկայացվի դամրարանային խեցեղենի հետ համատեղ։

Դամրարանային նյութերում ընդամենը երկու ամրողջական կոմպլեքս. ունենք, մեկը դոմերի մոտ հայտնարերված խմրում, մյուսր Արտշատ տանող խճուղու եղրին։

Դոմերի մոտ, Ա. Ստեփանյանի րակում հայտնարերված դամբարանի ուսումնասիրությունից պարզվեց, որ այն հիմնահողային էր։ Նրա վերջվորությունում հայտնարերվեցին հանդուցյալի ոսքի ոսկրները, շադանակագույն դծիկածածկ ժապավենաղարդ կճուճ և խորը թասեր։

Ոսքի ոսկրների դիրքից պարզվեց, որ հանդուցյալը դամրարան է դրրվել աջ կողքի վրա, դեմքով դեպի արեելք և ոսքերը կծկած։ Դամրարանից



Տախտակ I. Թասեր էլարիգ:

հայտնաբերվել են ինր կավաման, թոսանման փոքրիկ, գինեգույն չհչաքար (№ 2144/57) և օրսիգտքարե շեղր (ազ. XXV, № 2144/58)։

Հայտնաբերված խեցեղենը րստ ձևի, զույնի և զարգանախշման բաժանվում է հետեյալ խմրերի.

1. Կճուճներ խոզովակաձև րարձր վզով, ուռուցիկ և սահուն իջնող ուսերով, տափակ հատակով (աղ. XXV1)։ Նման երկու կճուճներ են հայտնաբերվել գամրարանում։ Երկուսն էլ համարյա նույն չափերն ունեն (№ 2144/49, 50)։ Արտաքինը լավ կոկած, հարթեցրած և սև ներկով պատած։ Վզի հիմքում ունեն հորիզոնական խորաքանդակ գոտիներ (№ 2144/ 49, 50)։ Երկուսի շուրթերն էլ դուրս են ճկված և ներսից եզերված նույնպես հորիզոնական գոտիով։ Խոզովակաձև վիզը մի փոքր ներճկվում է և ապա սահուն միանում ուսերին։ Այդ անցումը շեշտվում է միայն հորիզոնական գոտիներով։

2. Կճուճ, կարճ վզով, գնգաձև իրանով, շուրթը կլորացող և գեպի դուրս ճկված և ներսից շրջագծված հորիզոնական խորաքանդակ գոտիով (№ 2144/ 51)։ Կճուճն ունի մուգ շագանակագույն փայլեցրած մակերես։ Վզի հիմքում պույգ հորիզոնական գծային գոտիներով ստացված ժապավենի վրա կետաշար հորիզոնական զույգ շրջագծեր են արված (աղ. XXV3)։ Կճուճի ուսերը զարդարված են գիգզագ ժապավենով, որի ներսը ծածկված է զուգահեռ կետագծիկների շարքերով։ Այս ժապավենը հետաքրքիր է արված։ Նրա սասնմեկ սուր անկյուններր զարզարում են կճուճի ամենաուռուցիկ մասր, իսկ վերին ծայրերր կարծես ծալված և հագցված լինեն վզի հիմքով անցնող ժապավենի տակ։

3. Թասեր խորր, կիսագնդաձև, շագանակագույն մակերեսով։ Նման երեք թասեր են հայտնաբերվել (№ 2144/52—54), որոնք շուրթից ներս մի փոքր նեգանում են և ավարտվում կլորացող եզրով (աղ. XXV4)։ Արտաքինից եզերված են զույգ հորիզոնական խորաքանդակ գոտիներով։ Բոլորի շուրթերր մի փոքր թերի են։ Ճիշտ նման շագանակագույն թաս հայտնաբերվել է նույնպես գոմերի մոտ, հողային աշխատանքների ժամանակ (№ 1963/85)։

4. Թաս խորր, գունազարդ, նկարագրված թասերի ափսի (աղ. XXV2) միայն նախորդների համեմատ շուրթր մի փոքր ավելի է ներճկվում և արտաքինից եզերվում խորաքանդակ գոտիով (№ 2144/59)։ Չափերով մի քիչ փոքր է նախորդներից։ Պատրաստված է վարգագույն կավից, արտաքինր պատած մուգ կարմիր անգորով, իսկ շուրթից ցած ուսերր զարգարված են եզել սև փայլաներկով արված, իրար մեջ գասավորված կիսաշրշանների շարանով, որի միայն հետքերն են պահպանվել։

5. Պնակ ձվաձև, գորշագույն մակերեսով։ Շուրթերն ուժեղ դեպի ներս են թեքվում և արտաքինից զույգ հորիզոնական խորաքանդակ գոտիներով եզերվում (աղ. XXV6, № 2144/56)։

6. Գավաթ երկկոնաձև իրանով, մուգ շագանակագույն փայլեցրած մակերեսով։ Շուրթր մի փոքր դուրս ձկված։ Իրանի երկկոնիկ մասր սուր եզրով շեշտված (աղ. XXV5, № 2144/55)։

Վերոհիշյալ գամրարանից հայտնաբերված նյութերր մի շարք զուգահեռներ ունեն Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի միջին բրոնզեդարյան մշակույթում։ Մեծ են նմանությունները Կիրովականի 1948 թ. հայտնաբերված գամրտնարլուրի խեցեղենի հետ։

Գառնիի առաջին խմբի կճուճներից Կիրովականի գամբարանադաշտում հայտնաբերվել են հինգ հատ (№ 1861/13—17, աղ. XXVI₂)։ Նրանք նույնպես ունեն սև անգործով պատած մակերես, վզի հիմքում հորիզոնական խորաքանդակ գոտիներ, միայն Կիրովականի կճուճները մի փոքր մեծ են և ավելի գեղակազմ։

Գառնիի շագանակագույն կիսափշտաձև թասերը գարձյալ իրենց ղուգահեռներն ունեն Կիրովականի գամբարանադաշտում (№ 1861/21)։ Նրանք չափերով էլ են համապատասխանում (աղ. XXVI₄)։ Կիրովականում նույնպես հայտնաբերվել է գունագարդ թաս, գարգարված իրար մեջ հագնող կիսաշրջանների գոտիով (№ 1861/28)։

Գառնիի վերոհիշյալ գամբարանը թե՛ իր կառուցվածքով և թե՛ նյութերով կապվում է 1960 թ. էլարում պեղված № 2 գամբարանի նյութերի հետ։ Էլարի գամբարանը նույնպես հիմնահողային է, հասարակ, շաղբաղին թաղում, որում մեծ մասամբ խեցեղեն է հայտնաբերվել։ Տարբերությունն այն է, որ էլարի գամբարանում մարգկային ոսկորներ չկային։

Էլարում նույնպես հայտնաբերվել են խողովակաձև վզով սև և գորշագույն կճուճներ (№ 2245/5—9), վզի հիմքում խորաքանդակ գոտի, արտաքինը ոչ լավ մշակված։ Էլարի կիսագնդաձև թասերն էլ կոպիտ են, գորշագույն, վարգագույն, արտաքինից առանց անգործի (№ 2245/11—19)։

Արտակարգ նման են Գառնիի և Էլարի ձվաձև պնակները։ Երկուսն էլ գորշագույն են և չափերով նույնը (№ 2245/21)։ Մի փոքր զանազանվում են երկկոնաձև իրանով գորշագույն գավաթները։ Գառնիինն ավելի շեշտված անցումներ ունի, իսկ էլարինն ավելի վերասլաց է և երկկոնաձև մասը թույլ շեշտված։

Սակայն նմանությունները էլարի հետ միայն վերոհիշյալ գամբարանի նյութերով չի սահմանափակվում։

Էլարի նույն գամբարանադաշտում պատահարար հայտնաբերված նյութերում կան մի շարք ղուգահեռներ Գառնիի նյութերի հետ։

Գառնիի երկկոնաձև գորշագույն գավաթին նման են էլարում հայտնաբերվածները։ Նրանցից երկուսը (№ 1805/4,8) րաց գարշնագույն են, երկկոնաձև անցումը շեշտված է ռելիեֆ սուր եղրով (նկ. 80, ձախից), իսկ երրորդը (№ 1805/12) մուգ շագանակագույն, ունի շուրթից սկսվող և երկկոնիկ եղրին ավարտվող կանթ (նկ. 80, աջից)։ Չափերով էլ նրանք համարյա համապատասխանում են։

Կիսագնդաձև թասերը էլարում նույնպես շուրթի տակ եղերվում են խորաքանդակ գոտիով (№ 1805/9—11)։

Էլարի նյութերում ևս մենք տեսնում ենք Գառնիի գունագարդ թասի ղուգահեռները։ Նման մի թաս հայտնաբերվել է 1952 թ.։ Շուրթից ցած արտակարգ լավ պահպանվել է իրար մեջ փոքրից մեծ գտսավորված կիսաշրջանների ծաղկեշղթան, որոնցով առաջացած անկյունները ղարգարված են սև օղակներով (տախտ. I, վերևինը, № 1910)։

Վերջին տարիներս հայտնաբերվել է նման մի թաս ևս, միայն այն տարբերությամբ, որ շուրթից ցած նախ զույգ հորիզոնական գոտիներ են գնում, ապա նրանցից կախվում է վեցաշար կիսաշրջանների շղթան (№ 2261/3)։

Գառնիի վերոհիշյալ խեցեղենի ղուգահեռները կարելի է տեսնել նաև



Նկ. 28 Շենգավիթի հուշարձաններից մեկի զարդանախշը (Ս. Սարդարյանի կողմից պեղված)։

էջմիածնից հարավ, խաթունարխ տանող ճանապարհից աջ՝ 1962 թ. բացված դամբարանների նյութերում[1]։

Հետաքրքիր նման են գունաղարդ մեծ և փոքր կիսագնդաձև թասերը՝ գտրդաբված կիսաշրջանների շղթայով[2]։ Գառնիի ձվաձև պնակի կրկնօրինակը կարելի է համարել էջմիածնի դամբարանում հայտնաբերվածը (էգթ. № 1/30)։ Էջմիածնում ևս հայտնաբերվել է գավաթ, երկկոնիկ մասը շատ ցած, որից անմիջապես հետո սկսվում է հատակը (էգթ. № 1/29)։ Նույն դամբարանում հայտնաբերվել են նաև գունազարդ հիգրիաներ, որոնք նման են Գառնիում հայտնաբերվածներին։



Նկ. 80. Կավե գավաթներ Էլարից։



Նկ. 81. Վաղ բրոնզեդարյան գավաթ Կրովականից։

Բացի նշվածներից, Գառնիի վերոհիշյալ դամբարանի խեցեղենն ունի և այլ ղուգահեռներ։ Օրինակ, լայն տարածում ունեն ընդհանրապես գունազարդ խորը թասերը, զարդարված իրար մեջ գտասավորված կիսաշրջանների շղթայով։ Նման թասեր հայտնաբերվել են նաև Թաղաքենդում[3], Աղջաղայում (№ 1626), Էջմիածնում (№ 556/79), որոնցից մեկի (№ 1785/11) կիսաշրջանների շղթայի ստորին շարքը կարծես սուր անկյուններ է առաջացնում։ Նմանապես սուր անկյուն կազմող ժապավենով է եղերված Խղնաուզում հայտնաբերված նույնատիպ թասի կիսաշրջանների շղթան (№ 1476/43)։

Բաղմաշար կիսաշրջանների շղթայով զարդարված երեք թասեր հայտնաբերվել են Զոլաքարի (Մարտունու շրջան) հիմնահողային դամբարանում

---

[1] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 67—70.

[2] Նույն տեղում, աղ. II$_{6/7}$։

[3] К. Х. Кушнареаа, Тазакендский могильник в Армении, СА, № 1, 1960, стр. 141, рис. 5$_7$.

(№ 2053/5—7)։ Ճիշտ նման ղարղտնախշերով մի թասի բեկոր հայտնաբերվել է Նախաջիրում (Նախիջևան)[1]։

Բաղմաշար կիսաշրջանների շղթան իր սկիզբն է առել գեռևս մթա III հազարամյակում, որի լավագույն օրինակը կարելի է անսնել Կիրովականում հայտնաբերված գեղնագույն, փայլեցրած մակերեսով, երկկոնաձև ներքնաոսով գավաթի վրա (№ 1775)։ Այստեղ կիսաշրջանների շղթան կատարված է ռելիեֆ-ներճկման եղանակով (նկ. 81)։

Ընդհանրապես բաղմաշար կիսաշրջանների շղթան միջին բրոնզի մշակույթի ամենասիրված գարգամոտիվն է։ Նրանով է զարդարված Կիրովականի գամբանաբլուրի արծաթե թասը (№ 1860/20), Քոսի-ճոթերից ոչ հեռու Կամակատար կոչվող սրբավայրի ստորոտում պատահականորեն հայտնաբերված բաժակը (նկ. 82, կգբ. № 316), որի բոնակը ձևով հիշեցնում է էյտրի վերոհիշյալ երկկոնաձև գավաթը (№ 1805/12)։ Ա՛յն սիրված զարգամոտիվ է Ուղերլիկ-թեփեի սև փայլեցրած խեցեղենի համար, կատարված կետաշար գրոշմիչի միջոցով[2]։



Նկ. 82. Գունագարդ գավաթ Կիրովականի «Կամակատար» սրբավայրի մոտից։

Գառնիի վերոհիշյալ գամբարանի խեցեղենը իր ղուգահեռներն ունի նաև Վրաստանում, հատկապես Թրիալեթիի XV հիմնահողային գամբանաբլուրի նյութերում։ Այստեղ կարելի է տեսնել բագմաշար կիսաշրջանների շղթայով զարդարված գունաղարդ թասը[3], ապա արծաթե երկկոնաձև գավաթը, որն ունի օղակաձև նստուկ և ավելի նրբագեղ է[4]։

Վերը բերված ղուգահեռներից պարզվում է, որ Գառնիի վերոհիշյալ գամբարանի նյութերն առնչվում են միջին բրոնզի ղարգացման այն փուլի հետ, որն ընդգրկում է Կիրովականի գամբանաբլուրը և նրան ժամանակակից հուշարձանների խումբը։

Միջին բրոնզի խեցեղենի կոմպլեքսով Գառնիի երկրորդ հիմնահողային դամբարանը, ինչպես վերը նշվեց, բացվել է Արտաշատ տանող խճուղու եզրին, ջրմուղի գիծը փորելիս։ Դամբարանում հայտնաբերված տասներեք կավամաններից երեքը գունաղարդ են, մյուսները՝ հասարակ (№ 2100/1—13)։ Հինգ հասարակ, խորը թասերն ունեն գեղնագորշագույն անփայլ մակերես, կլորացող պսակ, ուռուցիկ ուսեր, մեծ մասամբ կրապատ են և թերի (№ 2100/5—9)։ Ձևով և որակով տարբերվում են մյուս գամբարանի թասերից։

Կոպիտ ջուրթերով և ծուռ իրանով կճուճը (№ 2100/4) ունի ոչ բարձր վիզ, արտաքինը նույնպես բաց գույնի է, սակայն տեղ-տեղ մրից սևացած։

---

[1] С. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, табл. XXXVII$_6$.

[2] К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе около Агдама, МИА, № 125, 1965, М.—Л., стр. 23—25.

[3] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, табл. XXI.

[4] Նույն տեղում, աղ. CII, վերևինը։

Տախտակ II. Կնոտն և թաս Խոռնիի դամբարաններից։

Պատրաստված է վատ հունցած և վատ թրծած կավից, խեցին շուտ փշրվում է։

Դամբարանում հայտնաբերված երեք դունազարդ կճուճներն էլ ցածրադիր են, դնդաձև իրանով, կարճ վզով և դուրս ճկված, լավ արտահայտված ուսակով (№ 2100/1—3)։ Բոլորի մակերեսը պատած է ալ կարմիր անդորով, շուրթերը և վիզը զարդարված են սև ներկով արված զուգահեռ կարճ ժապավենների խմբերով (տախտ. II վերեինը և տախտ. III)։

Կճուճներից մեկը (№ 2100/3) չափերով ղիջում է մնացած երկուսին և, ի տարբերություն մյուս դունազարդ կավամանների, սև փայլաներկով դարդանախշը ծածկում է կճուճի ամբողջ մակերեսը (տախտ. II վերևինը)։ Շուրթը ներսից զարդարված է երեք և վեց ժապավենիկներից բաղկացած վեց խմբերով, որոնք միմյանց հաջորդում են մեկընդմեջ, իսկ վզին ունի ուղղահայաց իջնող երեքական ժապավենից բաղկացած չորս խմբեր։ Վզի հիմքը և ուսերը զարդարում են երեք հորիզոնական ալիքաձև դոահներ։ Նրանցից դած կախված են թեք ալիքների խմբերով ծածկված չորս կիսագնդեր, որոնք ընդգրկում են կավամանի ամբողջ մակերեսը՝ ներքևում շրջափակվելով ժապավենաձև դոահով։

Նման զարդանախշեր առաջին անգամ են հանդիպում դունազարդ խեցեղենում և իրենց զուգահեռները դեռևս չունեն։

Մյուս երկու կճուճները և՛ չափերով, և՛ զարդանախշերով համարյա նույնն են։ Նրանց վզի հիմքում և ուսերին նկարված են չորս հորիզոնական ժապավեններ, որոնցից ցած տարածվում է սանրատամ շեղանկյունների շղթան (տախտ. III), մեկի վրա երկշարք (№ 2100/1), մյուսի վրա մեկ շարք (№ 2100/2)։

Երկշար շեղանկյունիների շղթայով կճուճն ունի այն յուրահատկությունը, որ շուրթն ավելի լայնադիր է և ներսի կողմից աստիճանավոր։

Կճուճներից մեկի վրա (№ 2100/2) զարդանախշը կատարված է շատ անփույթ, վզի քառադիծ զարդանախշի խումբը երբեմն շարունակվում և հատում է ուսերի ջրջադծերը, որոնք նույնպես ընդհատումներով են կատարված։

Սանրատամ շեղանկյունիների շղթայով զարդարված մի խորը թաս էլ հայտնաբերվել է նույն խճուղու եզրին 1958 թ.։ Այն մեծ է (№ 2098/4), խեցին վարդագույն, արտաքինը պատած է բաց նարնջագույն անդորով (տախտ. II, ներքևինը)։

Գնդաձև իրանով կճուճների բաղմաթիվ բեկորներ են հայտնաբերվել Գառնիի ընակատեղիում, որոնց իրանը նույնպես զարդարված է հորիզոնական ուղղադիծ կամ ալիքաձև ժապավեններից կախված մեկ շարք կամ երկշարք, երբեմն եռաշար սանրատամ շեղանկյունիների ծաղկեշղթայով (ետ. XXVII, № 1965/10 երկու կտոր, № 2099/58 ութ կտոր, 1966 թ. № 17)։

Նման կճուճների մի շարք վզերի մասերը դրսից և շուրթի ներսից զարդարված են սանրատամ շեղանկյունիների հատվածներով նկարված ուղղահայաց շարքերով, որոնք նմանվում են իրար շարունակություն կազմող ուղիղ և շրջված, կարճ պոչուկով, հայկական փոքրատառ «ա»-ին (ետ. XXVII, 1966 թ. № 37)։ Կան բեկորներ՝ զարդարված միայն պոչավոր առանձին «ա»-ով։ Որոշ վզի մասեր ղրսից ունեն մեկական պոչավոր «ա»-եր, իսկ վզի ներսում նրա ամբողջական կոմպոզիցիան (1966 թ. № 37)։ Մեկ այլ կճուճի

վղի վրա պահպանվել է նկարադրված ղարդանկարի՝ իրար մեջ հադնող շարանը (1966 թ., № 16)։

Բացի ընդաձև իրանով կճուճների բեկորներից, ամրոցում հայտնաբերվել են նաև ոչ մեծ կարասների բեկորներ, ղարղարված վերը նկարադրված շեղանկյունիների ղրթայով (№ 2099/58)։

Գառնիի թե՛ վերոհիշյալ դամբարանում, և թե՛ ամրոցում հայտնաբերված սանրատամ շեղանկյուններով ղարդարված խեցեղենի խումբն ունի բաղմաթիվ զուգահեռներ։ Հատկապես մեծ են նմանությունները Լճաշենի № 6 դամբարանադուրի խեցեղենի հետ։ Այստեղ մենք տեսնում ենք նույն ընդաձև իրանով կճուճները, և ոչ մեծ կարասները նկարադրված ղարդապատկերով[1]։

Լճաշենի № 6 դամբարանադուրում ևս, ինչպես Գառնիում, գունաղարդ կճուճների հետ հայտնաբերվել է նաև հասարակ, վատ թրծումով, անփայլ և անղարդ խեցեղեն։

Շեղանկյունիների ծայրնեղրթայով ղարդանախշը բավականին լայն տարածում ունի։ Նման ղարդանախշով խեցեղենի բաղմաթիվ օրինակներ հայտնի են Մուխաննաթ-թափայի բնակատեղիից (№ 1216/9, 29, № 1439/299, 300, 316, 392, 399)։ Այն արտակարդ բնորոշ է Արարատյան դաշտավայրի հուշարձանների համար։ Հայտնաբերվել է Ջրահովիտ բլուրում (Արտաշատի շրջանի), էջմիածնի շրջանի մի շարք հուշարձաններում՝ Գրամփայի և Աղթաղալայի միշև հայտնաբերված դամբարանային նյութերում (էդթ № 9/376), Մեծամորի բնակատեղիում և դամբարանադաշտում։

Վերը նկարադրված ղարդանախշի ամրողջ կոմպոզիցիան կրկնվում է էշմիածնից բերված կճուճներից մեկի վրա (№ 556/4)։ Ճիշտ նման ղարդանախշեր է կրում նաև Թաղաքենդում հայտնաբերված Թաղարը[2]։

Սանրատամ շեղանկյունիների շղթան ուղղահայաց գոտավորությամբ (որով ղարդարված են Գառնիի վերը նկատրագրված կճուճների վզերի մասերը) պատկերված է Ախլաթյանում հայտնաբերված գունագարդ թասի վրա (№ 1114, Սիսիանի շրջան), որտեղ այն ղուդորդվում է նույնպես ուղղահայաց դասավորված ալիքների խմբերի հետ։

Երբեմն սանրատամ շեղանկյունիների ծայրնեղրթան հանդես է գալիս իրար ղուդորդող բաղմաշար ալիքների, հորիզոնական ժապավենների միջավայրում։ Նման կոմպոզիցիայով կավամաններ հայտնաբերվել են Կարճաղբյուրում (№ 1559, նախկին Գոդակ-բուլաղ, Բասարգեչարի շրջան), Ձորաքարի դամբարանում (№ 2053/1), Կարմիրում (№ 2221/1, Նոր Բայազետի շրջան), Ախլաթյան գյուղում՝ Ջաղաց բլուրի մոտի բնակատեղիում[3]։

Նման ղարդանախշերով խեցեղեն բնորոշ է նաև Ուղերլիկ-Թափեի միջին և վերին շերտերին, որտեղ այն ղուդորդվում է և հասարակ, կոպիտ, անղարդ, անփայլ խեցեղենի, և սև փայլեցրած ատամնավոր, «քայլող» ղրղմիչով կտտարված ղարդանախշերով խեցեղենի հետ[4]։

---

[1] է. Վ. Խանզադյան, Լճաշենի № 6 կուրգանը, Հայկական ՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, № 2, 1960, էջ 65—77։ Նույնի, Лчашенский курган, № 6, КСИА, № 91 М., 1962, стр. 66—71.

[2] К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, стр. 140, рис. 2_{12}.

[3] Պեղումները Մ. Հասրաթյանի։

[4] К. С. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе около Агдама, стр. 86—99.

Վերջին տարիներս Ուղերլիկ-Թեփեին ժամանակակից մի շարք բնակատեղիներ են հայտնաբերվել Միլլի-Ղարաբաղի տափաստանում՝ Գեղ-Թեփեն, Ոսսուլ-Թեփեն, Նարզիղ-Թեփեն, Բաբալարի-Թեփեն և այլն, որոնց դունաղարդ խեցեղենը իրոք նմանվում է Գառնիի վերոհիշյալ խեցեղենին[1]։

Ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի, Ուղերլիկի և Լճաշենի նյութերը միասին ժամանակագրորեն տեղադրվում են Թաղաքենդի խմբի (մթա XX—XVIII դդ.) վերջի և Կիրովականի տիպի դամբանաբլուրների (մթա XVI—XV դդ.) խմբերի միջև[2], այսինքն նրանք թվադրվում են մթա XVIII դ. վերջով և մթա XVI դ. սկզբով։

Ուղերլիկ-Թեփեի միջին և վերին շերտերը ռադիոածխածնային մեթոդով թվադրվում են 3300±260 տ., այսինքն մթա 1340±260 թ.[3]։ Սակայն Ա. Ա. Իեսենն այդ տվյալները համարելով դեռևս նախնական, միջին շերտը թվադրում է մթա XVII—XV դարերով, իսկ վերին շերտը՝ մթա XV—XIV դարերով[4]։

Սանրատամ շեղանկյունիների ծաղկեպսակով զարդարված խեցեղենի թվադրությունը ճշտող նոր ավյալներ մեզ դեռևս հայտնի չեն։ Ինչպես վերը տեսանք, այդ շեղանկյունիների ծաղկեպսակով զարդարված խեցեղենը որոշ դեպքում ուղեկցվում է Թաղաքենդի տիպի խեցեղենի հետ (օրինակ, Պ. Ջարկովսկու պեղած № I դամբանաբլուրում, Մուխաննութ-Թափայում), որոշ դեպքում սև փայլեցրած խեցեղենի հետ, որը զարդարված է ատամնավոր քայլող դրոշմիչով կատարված տարատեսակ մոտիվներով (Ուղերլիկ-Թեփե)։ Միշտ ալես նրանց ուղեկցում են հասարակ, վատորակ, շիկադույն և դորշագույն կոպիտ և անփայլ կավամաններ։

Կան դեպքեր, երբ սանրատամ շեղանկյունիների ծաղկեպսակով զարդարված խեցեղենին ուղեկցում է սև փայլեցրած կամ գորշագույն խեցեղեն՝ զարդարված փորադիր հորիզոնական կամ կամարաձև ժապավենների մեջ ամփոփված զիգզագ դոտիներով։ Օրինակ, էլարի № 25 դամբանաբլուրում (№ 2246/93, 94), Գրամփա-Աղջաղալայի դամբարանում (էդթ № ԳԳ9/347, 376)։

Ուղերլիկ-Թեփեում վերոհիշյալ փորադիր զարդանախշերով խեցեղենը բնորոշ է ստորին շերտին, որը թվադրվում է մթա II հազարամյակի առաջին երկու դարերով[5], և, ինչպես էլարի № 25 դամբարանում, ուղեկցվում է եղևնաշար դոտիով, իսկ շեղանկյունազարդ դունաղարդը՝ միջին և վերին շերտերին, որը թվադրվում է, ինչպես վերը տեսանք, մթա 1340±260 թ.[6]։ Էլարի և Գրամփա-Աղջադալայի դամբարանային նյութերն ապացուցում են, որ վերոհիշյալ փորադիր և դունաղարդ խեցեղենը ժամանակակից են միմյանց։

Նորաատւսի դամբարանում եռանկյունիների մեջ ամփոփված այդ զիգզագները շագանակագույն խողովակաձև վզով կճուճի վրա համադրված են

---

[1] А. А. Иессен, Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА, № 125, М.—Л., 1965, стр. 19. табл. II

[2] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 56։

[3] К. Кушнарева, նույն. աշխ., էջ 99։

[4] А. А. Иессен, նշվ. աշխ., էջ 18։

[5] К. Кушнарева, նշվ. աշխ., նկ. 18₇, նկ. 22, նկ. 26₂, էջ 98։

[6] Նույն տեղում, նկ. 26₅, նկ. 27, էջ 99։

կիրովականին բնորոշ, վզի հիմքի ատամնաշար դրոշմիչով կատարված գծիկներով ծածկված ժապավենի հետ[1]։ Ժապավենի կամ եռանկյան մեջ ամփոփված զիդզադ դոաիններով զարդանախշը իր զարդացումն ու ծաղկումն է ապրում հատկապես ուշ բրոնզի դարաշրջանում (Լճաշեն, Էլար, Մեծամոր)։ Ուղեբլիկի սև փայլեցրած դրոշմազարդ ընդելուզված խեցեղենն իր անմիջական ժառանգորդներն ունի Լճաշենի XIV—XIII դդ. դամրանաբլուրների կարմիր և սպիտակ ընդելուզոտմով, դրոշմազարդ սև փայլեցրած խեցեղենում։

Ավելորդ չէ հիշել նաև, որ մինչև այժմ Կիրովականում և նրանից հյուսիս Ազատևի հովտում, նաև Թրիալեթիում շեղանկյունիների ծաղկեշղթայով դունազարդ խեցեղեն դեռևս հայտնի չէր։ Սակայն սանրաաամ շեղանկյունիների զարդամոտիվն են հիշեցնում Սիալկ II-ում, Ամբրում հայտնաբերված խեցեղենի զարդանախշերը[2]։ Նման զարդանախշերով խեցեղեն հայտնաբերվել է նաև Հարապպայի հուշարձաններում[3], Կենարոնական Հնդկաստանում (Դեկանում) մթա II հազ. II կեսով թվադրվող Մալվայի բարձրավանդակի հուշարձաններում[4]։ Ազվանստանում այդ զարդամոտիվը հայտնի է Մունդիգակ VI-ում, որը թվադրվում է մթա II հազ. վերջով[5]։

Բացի նկարագրված կոմպլեքսներից և նրանց հետ առնչվող նյութերից, Գառնիում հայտնաբերվել է խեցեղենի մի մեծ խումբ ևս, որն, ըստ զարդանախշման եղանակի, բաժանվում է հետևյալ խմբերի.

I. Դունազարդ խեցեղեն, վարդագույն հիմնազույնի վրա սև զարդանախշերով։

II. Փորագիր և դրոշմազարդ խեցեղեն։

Դունազարդ խեցեղենը միայն մոնոխրոմ է. աչքի է ընկնում սահուն, դեղեցիկ ձևերով։ Պատրաստված է վարդագույն, լավ մշակված կավից, արտևույթը լավ է թրծած և ունի կարծր խեցի։ Նրա հարթեցրած ողորկ մակերեսը ծածկված է ալ կարմիր կամ վարդագույն անդորով և իրանի վերին կեսը զարդարված է սև փայլաներկով կատարված երկրաչափական, կենդանակերպ, թռչնաձև պատկերներով։

Ըստ զարդամոտիվների, դունազարդ խեցեղենը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Պարուրազարդ թասերի և մեծ կավամանների բեկորներ, որոնք թե ձևով և թե զարդանկարով կապվում են դունազարդ խեցեղենի այսպես կոչված Թազաքենդի փուլի հետ։ Նման խեցեղենի մի շարք բեկորներ են հայտնաբերվել Գառնիի ընակատեղիում։

Թասերից մեկի բեկորի վրա՝ (№ 2099/58а) հորիզոնական խորանքանդակ դոտուց ցած նկարված ալիքաձև ժապավենից կախված են պարուրաձև զարդանախշեր (աղ. XXVIII,)։ Այսաևղ պարույրները ոչ թե մեկընդմեջ են կախված ալիքի գագաթից, այլ նրա երկու փուլր մեջ տալով, սկսվում են երրորդից։ Սակայն պարույրները մեծ են նկարված և ոչ միայն կախված են ալիքաձև դոտուց, այլև պարույրի շրջադիծր հետում է ալիքի

---

[1] Կամուի գավառագիտական թանգարան։

[2] А. Я. Щетенко. Древнейшие земледельческие культуры Декана, Л., 1968, стр. 121, рис. $35_{3,6,7}$.

[3] Նույն տեղում, նկ. 61։

[4] Նույն տեղում, նկ. 5_{10}, 6_3, նկ. 33_{37}, էջ 90—92։

[5] В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, стр. 268, рис. 45, стр. 296.

փուլերից մեկին։ Սաացվում է այսպես, պարույրն սկսվում է մեկ փուլից, շրջադծով հատում երկրորդ փուլին, երրորդն ազատ է մնում, հաջորդ փուլից սկսվում է մեկ այլ պարույր։

Պարուրազարդ թասեր և թասերի բազմաթիվ բեկորներ են հայտնաբերվել Հալկական լեռնաշխարհի հնավայրերում։ Գառնիի նկարագրված թասին արտակարգ նման է Ապարանում հայտնաբերվածը (№ 2056/5)[1], Թազաքենդում՝ Պ. վ. Ջարկովսկու կողմից պեզված № 2 դամբանաբլուրի թասերից մեկը, որը շուրթից ցած մեկի փոխարեն մի քանի ալիքաձև դոտիներ ունի և նրանցից կախված պարույրներ[2]։ Ճիշտ նման պարուրազարդ թասերի բեկորներ հայտնաբերվել են նաև Մուխաննաթ-Թափայի բնակատեղիում (№ 1439։ 2, 395, 398, 577, № 1216/11)։

Գառնիում հայտնաբերված մեկ այլ թասի բեկորի վրա պահպանվել են եռաշար հորիզոնական ալիքներ (Գառնիի թանդարան, № 9)։ Այն Թազաքենդի և Մուխաննաթ-Թափայի նման դարձյալ կախված պարույրներ է ունեցել։

Գառնիի երրորդ թասի բեկորը (№ 2235/36) շուրթից ցած ցանցազարդ է (ազ. XXVIII₂)։ Նման տիպի թասեր հայտնաբերվել են Թազաքենդում՝ Վ. Պ. Ջարկովսկու պեզած № 2 և № 3 դամբանաբլուրներում[3]։

Հայտնաբերվել են նաև մի շարք այլ կավամանների բեկորներ, որոնց վրա պահպանվել են միայն պարույրների մասերը (ադ. XXVIII₁₁, № 1965/9, № 2099/58, № 2235/36) և այլն։

Բացի պարուրազարդ թասերից, Գառնիում կան բեկորներ, որոնց վրա պահպանված զարդանախշերը նույնպես կապվում են Թազաքենդի և նրան հարող խեցեզենի հետ։ Օրինակ՝ բեկորներից մեկի վրա պահպանվել է շրջանակի մեջ առնված ցանց և նրանից ցած ալիքաձև դոտի (ազ. XXVIII₆, № 2099/57)։ Նման շրջանակի մեջ առնված ցանցերի և դադաթներով միացող եռանկյունիների հաջորդականությամբ են զարդարված Թազաքենդի մի շարք թասեր-քրեզաններ[4] և ոչ բարձր վզով կճուճների ուսեր[5]։ Այդ կավամաններից հայտնաբերվել են նաև Թալինում, Թեղուտում[6], Լճաշենի դամբանաբլուրներից մեկում[7]։

Գառնիի մեկ այլ բեկորի վրա պահպանվել է խեցեզենի՝ Թազաքենդի խմբին բնորոշ բազմաշար քառանկյունի շրջանակների մասը և նրանց միջով անցնող ալիքաձև ժապավենը (ադ. XXVIII₁₂, № 1964/4)[8], որը սովորական է նաև Մուխաննաթ-Թափայի դունազարդ խեցեզենի համար (№ 1216/10, № 1439/542), հայտնաբերվել է նույնպես Մեծամորում։

Թազաքենդի հետ կապվող բեկորներից են նաև հորիզոնական դոտուց կախված պարուրազարդ մեծ կավամանի ուռուցիկ մասը (ազ. XXVIII₈,

---

[1] Т. С. Хачатрян, С. Е. Есаян, Археологические находки в с. Апаран, СА, № 4, 1958, стр. 196, рис. 1_2.

[2] К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении, стр. 140, рис. 2_3.

[3] Նույն տեղում, էջ 140, նկ. 2_3։

[4] Նույն տեղում, էջ 140, նկ. 2_1, 2, 4, էջ 141, նկ. 3_2, 9։

[5] Նույն տեղում, նկ. 2_5, 10, 11, նկ. 3_{12}, 13։

[6] Ձեռք են բերված Ռ. Թորոսյանի միջոցով։

[7] Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էապները, Պատմա-բանասիրական հանդես, 1965, 2(29), ազ. 111, նկ. 10։

[8] К. Х. Кушнарева, Նույն տեղում, նկ. $3_{5,6,10}$։

№ 2144/12), որը հիշեցնում է է. Ռեսլերի պեզած № 27 դամրանաքլուրի կավամանր[1]։

Կճուճներից մեկը (ուռուցիկ մասի բեկորն է պահպանվել) ունեցել է բավականին հարուստ զարդանախշերի կոմպոզիցիա, որից պահպանվել է ուղղահայաց ժապավենների խումբ, աջից հաաված հորիզոնական նույնպես ղուգահեռ ժապավեններով։ Նրանցից ձախ նկարված են դադաթներով իրար միացած եռանկյուններ, որոնցից մեկը կիսվում է ժապավենով, իսկ մյուսը զարդարված է պարույրով (նկ. 83)։ Մեկ այլ պարույր էլ տեղավորված է այդ եռանկյուններից ցած առաջացած անկյունում (№ 2099/58)։ Այստեղ փաստորեն նույն Թազաքենդի զարդամոտիվն է, նույն պարույրներն ու կրկնակի «սակրերը», միայն մի փոքր այլ դասավորությամբ։



Նկ. 83. Գունազարդ խեցու բեկոր՝ Գառնի ամրոցից։

Գառնիի գունազարդ խեցեղենը վերոհիշյալ խումբն իր ղուգահեռներն ունի նաև Նոր Բայազետի (այժմ Կամո) թաղամասի բակում հողային աշխատանքների ժամանակ 1956 թ. հայտնաբերված դամբարանների նյութերում։

Դամբարաններից մեկում (№1) հայտնաբերվել են ընկույզի տապակի նման երկկողմանի ներճկումներով նավակաձև երեք թասեր, իսկ մյուս դամբարանում (№ 2)՝ հինգ գունազարդ կավամաններ[2] և քարից թասանման խորությունով կափարիչ։

Այս երկու դամբարանների կավամաններն իրենց զարդամոտիվներով



Նկ. 84. Գունազարդ թաս՝ Նոր Բայազետից։

կապվում են Գառնիի և Թազաքենդի խեցեղենի հետ, սակայն ունեն որոշ յուրահատկություններ, որի պատճառով հարկ ենք համարում մանրամասն նկարագրել հայտնաբերված խեցեղենը։

Երկու դամբարաններն էլ եղել են հիմնահողային։

№ 2 դամբարանում հայտնաբերվել են երկու կճուճներ և երեք խոր թասեր։

---

[1] Նույն տեղում, նկ. 35։

[2] Վերջինիս երկու կավամանները հրատարակված են Հ. Մարտիրոսյանի կողմից, տե՛ս А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 49, նկ. 19։

Վարդագույն անդորով պատած կմուճներն ունեն ոչ շատ բարձր խողովակաձև վիզ և ուռուցիկ իրան։ Զարդանախշերը ուսերի վրա սարածվում են երեք ժապավեններով, որոնք միմյանցից բաժանվում են սև, հորիզոնական գոտիներով։ Վերին ժապավենը զարդարված է գագաթներով միացող եռանկյուններով, նրանք իրար հաջորդում են որոշ ընդմիջումներով։ Երկրորդ կամ մեջտեղի ժապավենը զարդարված է իրար հաջորդող սրածայր եռանկյուններով, որից հինգի գագաթները վեր են, մնացածները՝ ցած։ Այդ եռանկյունիների եզրերը կատարված են սև ներկով, իսկ ներսը լցված է սպիտակ ներկով։ Վերոհիշյալ զարդաժապավենից ցած, սև ալիքաձև գոտուց մեկընդմեջ կախված են սև և սպիտակ պարույրներ, որոնք միմյանց հաջորդում են խմբերով։

Երկրորդ կմուճը նույն կառուցվածքն ունի, միայն վերը նկարագրվածից մի քիչ փոքր է[1]։ Զարդանախշերը նախորդից տարբերվում են նրանով, որ կենտրոնի ժապավենում սեպեր-եռանկյունիները ոչ միայն սպիտակ են, այլև սև։

Խոր թասերից մեկը համարյա կիսագնդաձև է[2], թույլ ներձկված, փոքրիկ հատակով, շուրթից ցած խորաքանդակ գոտի, նրանից ցած մեկընդմեջ իրար հաջորդող, գագաթները վեր, սև և սպիտակ եռանկյունիների շարան է նկարված։ Սպիտակ եռանկյունիները դարձյալ սև շրջադիծ ունեն։ Այդ



Նկ. 83. Նոր Բայազետի գամարանոցի թասի մյուս երևույթ։

եռանկյուններից ցած անցնում են երկու շարք ալիքաձև գոտիներ, վերևինը՝ սև, ներքևինը՝ սպիտակ, որից կախված են սև և սպիտակ պարույրներ։

Մյուս թասն ունի երկկոնիկ իրան և նույնպես փոքր ու թեթևակի ներձկված հատակ։ Կարմիր անդորի վրա ունի միայն սև զարդանախշեր։ Խորաքանդակ գոտիով եղերված շուրթից ցած զարդանախշերի վերին ժապավենում իրար են հաջորդում գագաթներով միացող եռանկյուններ, ցանցադաշտեր և միայն մեկ անգամ երեքական խաչվող գծեր, որոնցով առաջացած անկյունները սև ներկով են լցված։ Նրանցից ցած դարձյալ ալիքաձև գոտի է, որից կախված են սև պտրույրներ։

Վերոհիշյալ դամրարանի խեցեղենը թե՛ ձևերով և թե՛ գարգամոտիվներով կապվում է Գառնիի և Թաղաքենդի խեցեղենի հետ։ Տարբերությունը միայն նրանումն է, որ Նոր Բայազետի դամրարանում մոնոխրոմ խեցեղենի հետ միասին հանդես է գալիս նաև պոլիխրոմը։

---

[1] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 49, նկ. 19b։

[2] Նույն տեղում, նկ. 19a։

Նոր Բայազետի մյուս գամրարանում (№ 1), ինչպես վերը նշվեց, հայտնաբերվել են նավակաձև, ընկույզի տապակի տիպի ներհակումներով երեք թաս, որոնք պատրաստված են ալ կարմիր գույնի կավից։ Երկուսը մոնոխրոմ են, մեկը՝ պոլիխրոմ։

Մոնոխրոմ թասերից մեկի մի երեսը ղարգարված է ուղիղ և ալիքաձև հորիզոնական գոտիներով (նկ. 84)։ Այս ամբողջ ղարգագոտին երկու կողմից եզրափակվում է մեկական պարույրով։ Թասի մյուս երեսին նույն ժապավեններով անցնում են եռահարկ, ղաղաթները վեր եռանկյունների շարքեր (նկ. 85)։ Ամբողջ գարգագաշար ղարձյալ երկու կողքերից եզրափակվում է մեկական պարույրով։

Երկրորդ թասը (նույնպես մոնոխրոմ) երկու երեսից էլ ղարգարված է եռաշար ալիքաձև գոտիներով և նրանցից կախված պարույրներով։

Երրորդ թասի հիմնագույնը ղեղին է. հատակը՝ կարմիր (տախտ. IV)։ Մեկ երեսին՝ երեք հորիզոնական սև գոտիներով առաջացած ժապավենների վրա պահակերված է գագաթները վեր սև և կարմիր եռանկյունիների երկու շարք։ Երբեմն կարմիր եռանկյուններն ունեն սև շրջագիծ։ Նրանցից ցած սև ղիգզագ գոտուց կախված են սև և կարմիր պարույրներ։ Թասի մյուս երեսը ղարգարված է սև և կարմիր ուղիղ և ղիգզագ հորիզոնական գոտիներով։

Այսպիսով, կարմիր հիմնագույնի վրա սև ղարգանախշերով կամ կարմիրի վրա սև և սպիտակ գարգանախշերով խեցեղենի հետ երևան են գալիս նաև սև և կարմիր ղարգանախշեր՝ րաց գեղնագույն հիմնագույնի վրա։

Խեցեղենի նոր Բայազետի խմբին է հարում վերջերս Հաոիճում, ղամրաբաններից մեկում հայտնաբերված պարուրաղարդ կճուճը[1]։ Նրա գարգադաշաում թաղաքենգի պարույրների և այլ գարգամոտիվների հետ, հանդես է գալիս եռանկյուններ-սեպիկների նույն գոտին, որպիսին մենք տեսանք Նոր Բայազետի խեցեղենի վրա։

Դե-Բայի կոլեկցիայում կա թաղաքենգի տիպի մի կավաման պարույրների և կրկնակի սակրի գարգանկարով, որը հայտնաբերվել է Արմավիրում[2]։

Կիրովականում նման տիպի խեցեղեն գեռևս հայտնի չէ, իսկ Վրաստանում՝ Ռուսթավի քաղաքում, թագաքենգի տիպի ընգամեներ մեկ կավաման է հայտնաբերվել՝ ցանցագաշտերով և գագաթներով միացող եռանկյունիների ղարգանկարով[3]։ Սակայն վերոհիշյալ սեպիկների գոտուն մենք հանգիպում ենք Թրիալեթիի V և XVII գամրանարլուրների խեցեղենի վրի հիմքի գարգանախշերի շարքում[4]։ Այս գամրանարլուրների խեցեղենին ընգհանրապես ընորոշ են րաց հիմնագույնի վրա (րաց վարգագույնի, րաց գեղնավունի) սև կամ շագանակագույն ղարգանախշեր, որը, ինչպես տեսանք, ընորոշ էր նաև մեզ Թրիալեթիի V և XVII գամրանարլուրների խեցեղենի վրի հիմքի գարգամոտիվներում իրենց գունային արտացոլումն են գտել մեթա III հաղարամ-

---

[1] Պեղումները Թ. Խաչատրյանի, 1967։

[2] К. Х. Кушнарева, նշվ. աշխ., էջ 147։

[3] Г. А. Ломтатидзе, Важнейшие результаты археологических раскопок в Рустави. Материалы по археологии Грузии и Кавказа, I, Тб., 1955, стр. 200, 208, табл. XV, рис. 1. Л. А. Чилашвили, Город Рустави, Тб., 1958, табл. II, рис. 5.

[4] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 391, табл. LXXVIII, стр. 389, табл. LXXVII.

Տախտակ III. Կճուճներ Գառնիի դամբարաններից։

յակի վերջի XI, XXIV դամբանարլուրների և Սարիթ-Ազչտլի զարդամոաիվ-ներր (եոանկյան մեջ ամփոփված սեպաշարր)[1]։

Ավելորդ չէ հիշատակել, որ XVII դամբանարլուրի դունազարզի պարուրաշարր, ինչպես և ոսկե զավաթի պարույրների շրջադոտին հիշեցնում են դարձյալ Թազաքենդր[2]։ Այսպիսով, Թրիալեթիի V և XVII դամբանարլուրներր եթե ժամանակակից չեն Թազաքենդի խմրին, ապա հաջորդել են նրան։ Ընդհանրապես շերտադրական տվյալների բացակայության պայմաններում զժվար է ճշտել թվագրության հարցերր։

Թազաքենդի խմրի մեջ մանող դունազարզ խեցեղեներ բազմաթիվ օզակներով դեռևս կապվում է վաղ բրոնզի մշակույթի հետ։ Կապող հատկանիշներր հետևյալներն են.

1. Կավամանների ձևր,
2. Զարդանախշման որոշ սկզրունքներ,
3. Զարդամոտիվներ,
4. Գունազարդման սկզրունքր։

Ինչպես վերր ասացինք, Թազաքենդի խմրի կավամանների մի մասի հատակր փոքրիկ է և թույլ ներկված, որոշ կավամաններ դեռևս պահպանել են երկկոնիկ ձևր։ Վաղ բրոնզի բնակույզի տապակի տիպի ներճկումներով նավակաձև թասերր Հայկական լեռնաշխարհում բավական երկար կյանք են ունեցել, իրենց դոյությունր պահպանել են մինչև մեթ II հազարամյակի վերջերր և բազմաթիվ օրինակներով ու տարբերակներով հայտնաբերվել են Լճաշենի դամբանարլուրներում։ Այս թասերի յուրահատուկ ձևր և, ինչպես վերր ասացինք, շքեղ զարդանախշումր են-թադրել է ասլիս նրանց ազաշամունքային արարողություններին ծառայելր, որոնց մասին կխոսվի վերջին դլխում։

Թազաքենդի մի շարք թասերի շուրթից ցած նեղ ժապավենի մեջ երկրաչափական ասրրեր զարդանախշերի ամփոփման սկզրունքր (նկ. 68)[3] րնորոշ է վաղ բրոնզեդարյան մշակույթին։ Նման նեղ ժապավեններով են զարդարված Գառնիի, Կիրովականի՝ Քոսի-ճոթերի, Մաշտոցի բլուրի, Թադավորանիստի, Կաոնուտի, Շենդավթի կավամանների վզի հիմքր[4]։ Միջին բրոնզի հաջորդ փուլերում զարդանախշման վերոհիշյալ սկզրունքր վերանում է։

Այդ երկրաչափական զարդամոտիվների մեծ մասր նույնպես կապվում է վաղ բրոնզի փայլեցրած խեցեղենի հետ։ Այդպիսին են ցանցադաշտերր, ասրրեր ուղղություն ունեցող դծիկներով. հատվող անկյուններր, դադաթներով միացող եռանկյունիներր, շեղանկյունիներր։ Այդպիսի օրինակներից մեկն էլ հայտնաբերվել է Էլարում. (№ 1813/13)։ Նույն զարդամոաիվներր կարելի է տեսնել Կիրովականի, Շենդավթի, Արադածի խեցեղենի վրա։

Թազաքենդի խմրի խեցեղենում որոշ կավամանների վրա կրկնվում է

---

[1] Նույն տեղում, էջ 389, աղ. LXXVIII, էջ 393, աղ. LXXVII։

[2] Նույն տեղում, էջ 389, աղ. LXXVII և էջ 421, աղ. XCIII։

[3] Մոսկվայի պետական պատմական թանգարան, ինվ. 43941—24/1։

[4] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 74, նկ. 22, 23, էջ 75, աղ. XXI—XXIII։

տարբեր դասավորությամբ իրար մեջ հադնող անկյունների զարդամոտիվը (նկ. 86₁, ₂)[1], որը բնորոշ է Շենդավիթի վերջին փուլին, միայն կատարված սեղմելու եղանակով (№ 1618/222, № 1442/55—56, 68 և այլն)։ Նոր Բայազետի թաղամաշար և բազմահարկ նոանկյունաշարն (տախտ. IV) արտակարգ սիրված զարդամոտիվ է մթա III հազարամյակի նուրբ դծային զարդանախշերով սև փայլեցրած խեցեղենի համար (Շենդավիթ, նկ. 87₁₀,₂₃,₂₄, № 1330/134, № 1618/155, Քոսի-ճոթեր և այլն)։ Նրանցով է զարդարված նաև Շենդավիթի դամբարաններից մեկում հայտնաբերված ոսկե մեդալիոնը[2]։ Այսպիսով մթա III հազարամյակի վերոհիշյալ նուրբ դծային զարդամոտիվն իր դունային արտացոլումն է գտել Նոր Բայազետի պոլիխրոմ խեցեղենում։



Նկ. 86. Գունազարդ թասեր Թազաքենդից։

Թազաքենդի խմրի զարդանախշերում նորությունն այն է, որ մթա III հազարամյակի վաղ փուլերին բնորոշ առանձին կոմպոզիցիաների փոխարեն այսաեղ մենք անում ենք շարունակական ալիքներ և նրանցից կախված պարույրներ, երբեմն էլ համակենտրոն շրջանների շղթաներն ու զոտիները (նկ. 86)[3]։

Գունազարդման եղանակը նույնպես օտար չէ վաղ բրոնզի խեցեղենին։

Բաց ֆոնի վրա կարմիր զարդանախշերով, կամ կարմիր ֆոնի վրա սև զարդանախշերով խեցեղեն հայտնաբերվել է Շենդավիթի երրորդ և չորրորդ շերտերում (այսինքն վաղ բրոնզի միջին և ուշ փուլերում) սև փայլեցրած երկրաչափական նուրբ դծային և խոշոր դծանախշով խեցեղենի հետ[4]։

Գեոյ-Թեփեի «K₂» շերտում հայտնաբերվել են երկու կաոր գունազարդ խեցի՝ բաց ֆոնի վրա սև զարդանկարով[5]։ Նման խեցեղեն հայտնաբերվել է նաև «K₃»-ում[6]։

---

1 К. Х. Кушнарева, նույն տեղում, էջ 140, նկ. 27։
2 Ս. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, նկ. 45₁։
3 Մոսկվայի պետական պատմական թանգարան, ինվ. 43941—24—1։
4 Ս. Սարդարյան, նշվ. աշխ., էջ 187, աղ. LXI, էջ 189, աղ. LXIX, էջ 219։
5 T. Burtou-Brown, նշվ. աշխ., էջ 35, 45։
6 Նույն տեղում։



Նկ. 87. Շենգավիթի սև փայլեցրած խեցեղենի երիզաչափական զարդամոտիվները։

Գունազարդ խեցեղենը բնորոշ է Մալաթիայի և Խարբերդի վազ բրոնզի III փուլին[1]։ Վարդագույն կամ բաց դեղնավուն դույնի անդորով խեցեղենն սև դարդանկարով, հայտնաբերվել է Ասլան-Թեփեում, Ֆուրունկուլում և Կարահուլուկում, որտեղ սակավ հանդիպում են նաև երկդույն զարդանախշերով խեցեղեն։ Գունազարդի սիրված ձևերից է կավամանի շուրթի զարդանախշումը թեք դծիկներով և այլն[2]։

Վրաստանում, Բեշտաշենի ամրոցի սեռ. III հազարամյակի խեցեղենի III կոմպլեքսում, նուրբ դծային զարդանախշով խեցեղենի հետ, շերտագրության նույն պայմաններում հայտնաբերվել է գունազարդ խեցեղեն[3]։

Այսպիսով, ինչպես վերը տեսանք, չնայած Թալաքենդի տիպի խեցեղենը ձեռք է բերում նոր հատկանիշներ, սակայն դեռևս բազմաթիվ օղակներով կապված է մեզ III հազարամյակի հետ։

Գունազարդ խեցեղենի Թալաքենդի խումբը որոշ զուգահեռներ ունի Հին Արեելքի մշակույթում։ Ըստ Բ. Կուֆտինի, դադաքներով միացող եռանկյունների դարդամոտիվը հարում է էլամի և Միջագետքի էնեոլիթյան նմուշներին, իսկ երիզաժապավենների զարդանկարը՝ Ալիշարի ըլուրի III շերտին[4]։ Հ. Մարտիրոսյանը Թալաքենդի և Կարմիր վանքի վազ խումբը համեմատում է Թեփե-Հավրայի XIII—XIV շերտերի խեցեղենի, Սուզի և Փոքր-Ասիական հուշարձանների խեցեղենի հետ[5]։

Կենտրոնական Անատոլիայում հայտնաբերված գունազարդ խեցեղենն իրոք աղերսվում է Թալաքենդի խմբի խեցեղենի հետ։ Օրինակ, Հյուդո Գրոտի նյութերում երիզաժապավենից կախված պարույրները լայն դոտիներով կազմված անկյուններում երեան են գալիս զույգ-զույգ[6], իսկ երբեմն էլ Թալաքենդի խմբի խեցեղենի նման շաբանով իրար են հաջորդում՝ կտխված ալիքազարդ դաշտը եզերող ժապավենից[7]։ Որոշ բեկորների վրա երիզաժապավենից կախված պարույրների զարդանկարը հորիզոնական մի շարք դաշտեր է առաջացնում[8]։ Կան բեկորներ, որոնք զարդարված են սեպաշարով կամ եռանկյունաշարով[9], որը, ինչպես տեսանք, սիրված զարդամոտիվ է Թալաքենդի խմբի համար (Հաճիճ, Նոր Բայազետ)։ Որոշ կավամանների վրա սեռ փայլաներկով սեպաշարերը կարմիր անդորի վրա ուղղահայաց շարքեր են կազմում[10], կամ էլ հորիզոնական բազմահարկ եռանկյունաշար, որոնք բնորոշ են Ալիշար III-ի մեզ 2200—2000 դդ. թվագրվող խեցեղենին[11]։ Ինչպես վերը տեսանք, նրանց նախատիպերին մենք հանդիպում ենք Շենդավթի

---

[1] C. Burney, Eastern Anatolia... p. 205.

[2] Նույն տեղում։

[3] Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 112, 116—117.

[4] Նույն տեղում, էջ 7։

[5] А. А. Мартиросян, Նշվ. աշխ. էջ 53։

[6] Henri de Genouillac, Ceramique Cappadocienne, v. II, Paris, 1926, p. 7, 9, fig. 21, 22, 23.

[7] Նույն տեղում, աղ. 2, № 9511։

[8] Նույն տեղում, աղ. 2, № 9809։

[9] Նույն տեղում, էջ 10, նկ. 27, 29։

[10] Նույն տեղում, էջ 38, նկ. 73 և նույն գրքի II հատոր, աղ. 5 bis, № 122։

[11] Nimet Özgüc, Marble idols and statuettes from the excavations at Kültepe, Belleten Türk tarih Kurumu, XXI, № 81, 1957, Ankara, p. 77, fig. 24.

սև փայլեցրած խեցեղենի (նկ. 87₂₆, ₂₇), ոսկե մեդալիոնի, կամ էլ Թրիալեթի XI և Թեթրի Ծղարոլի գտմրանարլուրների սև փայլեցրած, նուրբ գծային եղանակով գարգարված խեցեղենի վրա[1], որոնք վերարերում են վաղ բրոնզի III փուլին։

Չնայած վերոհիշյալ ղուգահեռներին, խեցեղենի Թաղաքենգի խումբը փոքրասիականից սւարբերվում է կավամանների ձեով, զարդանկարի հիմնական կոմպոզիցիայով։ Նույն բանը կարելի է ասել նաև հարավմիջագետքյան ղուգահեռները նջելիս։

Այսպիսով, խեցեղենի Թաղաքենգի խումբը, որը միջին բրոնզի գարաշրջանի ամենավաղ փուլն է ներկայացնում, ծագումնարանորեն սերտորեն կապված է Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի խեցեղենի հետ, առաջացել և ձեավորվել է տեղական հիմքի վրա, ագգել, փոխազդվել է հարեան երկրներից և, ինչպես Բ. Ա. Կուֆտինն է ընորոշում՝ դարգանալով հարավմիջագետքյան և արեմայան հոսանքների սերտ զործակցության ջայմաններում, այն կագմում է Առաջավոր Ասիայի գունաղարգ խեցեղենի մի ինքնուրույն ֆացիա[2]։

Խեցեղենի Թաղաքենգի խումբը Հ. Մարաիրոսյանի կողմից թվագրվում է մթա II հազարամյակի սկզրի երկու գարերով[3], մթա XX—XXVIII գարերով[4]։ Ա. Իեսսենը այն թվագրում է մթա XIX—XVIII գարերով[5]։ Ինչպես վերը տեսանք, խեցեղենի Թաղաքենգի խումբը միջին բրոնզի ամենավաղ փուլն է ներկայացնում և բաղմաթիվ ճյուղերով առնչվում է վաղ բրոնզի մշակույթի հետ։

2. Գաոնիի գունաղարգ խեցեղենի երկրորգ խումբը կազմում են հիգրիայի տիպի, աննկանք, մի փոքր ձգված իրանով, թեք ուսերով, սահուն, գեղեցիկ գուրս ճկված պսակով ավարտվող ոչ չատ րարձր, լայն վղով մեծ կավամաններ։

Դամրարաններից հայտնարերվել է նման մեկ ամրողջական հիգրիա, իսկ բնակաեղիից՝ մի շարք րեկորներ։

Դամրարանից հայտնարերված հիգրիան (ասիա. VI, № 1965/224, նրա հետ հայտնարերվել է նաև շագանակագույն կճուճ, կետագիծ նկարով, № 1965/225), զարգարված է երկդաշտ կոմպոզիցիայով, այսինքն՝ իրանի վրա գարգանախշերի իրար հաջորգող երկու գաշտ ունի։ Մեկը սարածվում է վղից ցած՝ ուսերի մասում և եղերվում ալիքաձև գոտիներով, մյուսը կազմում է նրա շարունակությունը՝ ընգգրկելով հիգրիայի ուռուցիկ մասը։ Վգի հիմքի և ուսերի ալիքաձև շրջագծերով առաջացած վերին գաշար զարգարված է ուղղահայաց իջնող զույգ ալիքների և վեց ժապավեններից բաղկացած խմբերով, որոնք իրար հաջորգում են մեկրնգմեջ։ Յուրաքանչյուր խումբ ներկայացված է հինգ անգամ։ Վերին գաշտը եղերող զույգ ալիքաձև հորիզոնական շրջագծերից ցած, ղիգզագ գոտիով առաջացած եռանկյունաձև

---

[1] Б. Куфтин, նշվ. աշխ., էջ 407. աղ. LXXVI: О. Джапаридзе, Археологические раскопки в Триалети, 1957—1958 годах, табл. II.

[2] Б. Куфтин, նշվ. աշխ., էջ 7։

[3] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 54։

[4] Նույն տեղում, էջ 56։

[5] А. А. Иессен, նշվ. աշխ., էջ 18։

Տախտակ IV. Նավակաձև բաս Նոր Բայազետից։

հրապարակները ծածկված են ալիքաձև ժապավեններով, հինդում՝ հորիզոնական դասավորությամբ, իսկ մեկում՝ թեք։ Առանկյուններից ցած նկարված գիդղադ երիզաժապավենի միջով անցնում է ալիքաձև գոտի։ Ինչպես առանկյունների, այնպես էլ երիզաժապավենների դադաթներից կախված են օղեր։

Երիզաժապավեններով ստաջացած անկյուններում նկաբված են շրային թոչուններ, որոնք բաղերի են նմանվում, թվով վեցն են, իրանը զարդարված է եռաշար ալիքներով։

Երկդաշտ կոմպոզիցիայով է բաղանման թոչուններով է զարդարված Ջուռնարադում հայտնաբերված հիդրիան[1], իսկ Ղրղիի (Շամշադինի շրջան) հիդրիայի վրա թոչուններ են նկարված I և II դաշտերում[2]։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Գառնիի բնակատեղիում հայտնաբերված, նույնպես երկդաշտ հիդրիայի մասերը (1968 թ. № 17)։ Նրա վղի հիմքի ժապավենից ցած (փոքր մասն է պահպանվել) նկարված են երկարապոչ, համարյա դնդաձև հետնամասով, չորս կարճ ոտքերով, անսովոր ձևի, առջևի մասով սարօրինակ մեծ և փոքր, ավելի շուտ վայրի ցուլ կամ բիզոն հիշեցնող կենդանիների թե դաղանների խմբեր (աղ. XXIX)։ Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ 1957 թ. նույն տեղամասի 16ա քառակուսու մոտ (որտեղ հայտնաբերվել են վերոհիշյալ հիդրիայի բեկորները), 15ա քառակուսում գտնված խեցու մի բեկորը այդ հիդրիայի մասերից է, միանում է նրա ձախ վերին անկյանը և լրացնում նկարադրված պատկերը։ Բեկորը հրատարակված է և թերի լինելով, այդ տարօրինակ կենդանին մանր եղջերավոր կենդանու է նմանեցվել[3]։ Այսպիսով, վերականգնված բեկորներով ստացվում են նույնանման մեծ և փոքր կենդանիներ—դաղաններ, որոնք շարժվում են միևնույն ուղղությամբ։ Հինգերորդ կենդանին տեղավորված է բեկորի ստջ մասում, թերի է, սակայն դրացվում է, որ այլ տիպի է, պոչը կեռված է դեպի ցած, հետևամասը կլորացող չէ, ունի ձգված մեջք, դժվար է որոշել նրա ինչ լինելը։

Թվում է, թե նույն հիդրիայի մասն է կազմում դարձյալ 1957 թ. նույն բառակուսում հայտնաբերված մեկ այլ բեկոր ևս, որը նույնպես հրատարակված է (№ 2099/58)[4]։ Նրա վրա նկարված են երկարավիզ, երկարականջ և երկարապոչ կենդանիներ՝ հանդստանալիս (աղ. XXIX)։ Նրանք նստած են բնական վիճակում՝ մեջք-մեջքի աված, ոտքերը ծալած, դլուխները ետ են գարձրել, բերաններր՝ բացել։ Խեցու վրա կենդանիներից մեկի նկարը պահպանվել է ամրողջությամբ, երկրորդից՝ մեջքն ու պոչը, իսկ երրորդից՝ երկար վիղն ու գլուխը։

Այսպիսով, եթե միացնենք այս բեկորները, ապա նկարադրված հիդրիայի վրա կտեսնենք վայրի կենդանիներով, դաղաններով հարուստ մի դաշտ։ Ինչպես տեսանք, նրանք հանդսաի վիճակումն են և չեն հետապնդվում։ Հավանաբար մենք այստեղ ունենք որսի պաշտամունքին, մադիայի

---

[1] Я. И. Гуммель, Крашеная керамика в долине Ганджа-чая. Изв. Азерб. фил. АН СССР, Баку, 1939, стр. 37 и сл., рис. 1—3.

[2] Պեղումները Ս. Տսայանի։

[3] Է. Վ. Խանզադյան, Լճաշենի № 6 կուրգանը, էջ 71, նկ. 8։

[4] Նույն տեղում, նկ. 7։

նվիրված մի տեսարան։ Այդ կենդանիներն իրենց ձևով բավական արխաիկ են և հավանաբար պատկերում են միջին բրոնզի դարաշրջանի կենդանական աշխարհը։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանի դունազարդ խեցեղենի վրա հանդիպող այս պատկերները եզակի են։

Նկարագրված կենդանազարդ դաշտը ներքևից եզերված է հորիզոնական ժապավենով։ Նրանից ներքև սկսվում է հիդրիայի երկրորդ զարդադաշտը, որից պահպանվել է միայն եռանկյունաձև հրապարակը՝ ծածկված թեք յոթ ալիքաձև ժապավեններով։ Ներքևի անկյունում պահպանվել է նաև երիզ-ժապավենի մասը։

Այս հիդրիայի մասերի հետ, նույն քառակուսում հայտնաբերվել է նման



Նկ. 88. Թռչնաղարդ բեկորներ Դառնիի ամրոցից։

մի իւեցու բեկոր, որի վրա դծված կամարաձև ժապավենով և նրան կից ալիքաձև դոտիով առաջացած դաշտում նկարված են երկու երկարավիզ թռչուններ, որոնք կարծես նսաած են հորիզոնական գոտու, հավանարար՝ ճյուղի վրա (ներքևում, աջ անկյունում նրա մի մասն է պահպանվել, ազ. XXIX)։ Աջ կողմում թռչնի վզի մոա պահպանվել է ինչ-որ կենդանու պոչի մաս։ Այս բեկորը իր խեցիով, թրծումով, աստառով և արտաքին մնղորի դույնով միանդամայն նման է վերը նկարագրված հիդրիային և հավանարար տեղավորված է նրա երկրորդ զարդադաշտի երիզաժապավենով կազմված անկյուններում։

Մի առանձին նրբությամբ է կատարված Դառնիի բեկորներից մեկի զարդանկարը (1966 թ. № 18)։ Այն կավամանի ուսերի մասն է. որի վրա պահպանվել է վզի հիմքով անցնող հորիզոնական ալիքաձև դոտին և նրանից սկիզբ առնող, զևպի ներքև տարածվող եռանկյունաձև ալիքածածկ հրապարակի մասը։ Ինչպես երևում է գծազրից, այստեղ ալիքածածկ եռանկյունիները հաջորդաբար չեն տարածվել, այլ ընդհատումներով։ Այդ րաց դաշտերից մեկը (որը պահպանվել է ավյալ բեկորի վրա) զարդարված է երկարավիզ արոսի տիպի թռչունի կամ կարապի նկարով և նրանից աջ հավանաբար բադի կամ այլ թռչունի ձուտի նկարով, որի մարմնի մի մասը և ոտքերն են պահպանվել (նկ. 88ւ)։ Երկուսի իրանն էլ զարդարված է ալիքաձև հորիզոնական ժապավեններով, մեծինը՝ ղույգ, փոքրինը՝ մեկ ժապավենով։

Նրանցից ցած պահպանվել է հորիզոնական ալիքաձև գոտու մասը, որից հետո տարածվել է հավանաբար զարդամոտիվների երկրորդ դաշտը։ Այս-

պիսով նման երկարավիզ թռչունի պատկերը նույնպես առաջին օրինակն է դունազարդ խեցեղենի շարքում։

Ընդհանրապես վերը նկարագրված հիդրիային վերադրվող կենդանակերպ և թռչնազարդ նկարները ինքնատիպ են, դեռևս իրենց զուգահեռները չունեն ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, այլև ընդհանրապես Ենդրկովկասի վերոհիշյալ դարաշրջանի մոնոխրոմ դունազարդ խեցեղենի շարքում։ Չնայած էլաբում ևս հայտնաբերվել է դունազարդ կավաման՝ կենդանակերպ զարդանախշերով, սակայն իրենց բնույթով դրանք այլ են, չեն առնչվում Գառնիի վերը նկարագրվածների հետ, մասամբ կենդանակերպ են, մասամբ թռչնաձև, երբեմն ծովացուլը հիշեցնող մարմնով[1]։

Կավամանների զարդանախշումը տարատեսակ թռչուններով, առասպելական և դիշատիչ կենդանիներով բնորոշ է նաև մթա II հազարամյակի երկրորդ կեսի պոլիխրոմ խեցեղենի համար։ Նման զարդանախշերով կավամաններ մեզ հայտնի են Նախիջևանի I և II Քյուլ-թափաններից[2], Շահ-թախտից[3] և այլն։

Բացի վերը նկարագրածներից, երկդաշտ կոմպոզիցիայով հիդրիաներ հայտնի են նաև Էլարից (№ 2246/115), Կիրովականի դամբարանաբլուրից (№ 1861/22), Էջմիածնի 1962 թ. պեղված հիմնահողային դամբարաններից[4], Վրաստանում Թրիալեթիի I և VII դամբարանաբլուրներից[5] և մի շարք դամբարանադիս ունեցող դամբարանաբլուրներից[6]։

Գառնիի բնակատեղիում հայտնաբերվել են նաև խեցիներ, որոնց զարդանախշերը մեկ գալտ ունեն և սկսվելով վզի հիմքում, ավարտվում են դոտկատեղում։ Նրանք կազմված են կամ վզի հիմքից տարածվող ալիքածածկ նոանկյուններից և երիզաժապավեններից (ազ. XXX₁, № 2099/14, 58), կամ զիգզագ ալիքազարդ բազմաշար երիզաժապավեններից (ազ. XXX₃, № 2099/97, № 2235/36), որոնցով առաջացած վերին և ներքին անկյունները զարդարվել են կարծես ջրում լողացող թռչուններով (նկ. 88₂, № 2288/49)։

Նման զարդանախշերով հիդրիաներ հայտնաբերվել են նաև Կարմիր պլուզում (Նոր Բայազետի շրջան, որի վերին և ներքին անկյուններում նկարված են զույգ թռչուններ), Կիրովականում՝ քաղաքի հրապարակը կառուցելիս (ԿԳԹ № 216, զույգ թռչուններ են նկարված երիզաժապավենների միայն ներքևի անկյուններում), Ղրղիում (№ 2311/3), որի վերին անկյուններում նկարված են զույգ, իսկ ներքին անկյուններում՝ երեքական ջրային թռչուններ, Հիդրիա երիզաժապավեններով կազմված անկյուններում երեքական

---

[1] Э. В. Ханзадян, Расписной сосуд с зооморфными изображениями из Элара, СА, № 4, М., 1966, стр. 173, рис. 1.

[2] О. А. Абибуллаев, Археологические раскопки в Кюль-тепе, табл. 41₄. В. Г. Алиев, Крашеная керамика Кюльтепы II, Доклады АН Азерб. ССР, т. XIX, Баку, 1963, стр. 70, табл. I, стр. 73, табл. II₅, նույնի, Новые Материалы о культе расписной керамики в Азербайджане, СА, № 1, 1967, стр. 117—118, рис. 2.

[3] А. Алекперов, Крашеная керамика Нахичеванского края и Ванского царства, СА, 1937, стр. 252—257.

[4] А. А. Мартиросян, *Նշվ. աշխ., էջ 68, ազ.* II₁,₂։

[5] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 80.

[6] *Նույն տեղում, էջ 401, ազ.* LXXXIII, *էջ 399, ազ.* LXXXII։

[7] *Պեղումները Ս. Եսայանի։*

թոլուններով, հայտնաբերվել են Թրիալեթիի VII հիմնահողային դամբանաբլուրում[1], երկդաշտ կոմպոզիցիայով հիդրիայի հետ[2]։

Արտակարդ լայն սարածում ունեն Գառնիում հայտնաբերված խեցեզենի սիպի ալիքածածկ եռանկյունիներով և նրանցից ներքև՝ ալիքազարդ երիզաժապավեններով, ծայրերին օզակներով զարդարված կտվամանները։ Նման մեծ կավաման (№ 1861/27) և մի քանի միջին մեծության կճուճներ (№ 1861/24, 26—27) հայտնաբերվել են Կիրովականի դամբանաբլուրում, Աղավնատան դամբանաբլուրներում (սախա. VII, աջից, ՊՊԹ., համար չունեն), Էլարում (№ 2246/99), Նախիջևանում՝ Շոռ-Թեփեից (Նորաշենի շրջան)[3], Զանգեզուրի լեռնալանջում՝ Ազնաբյուրտ դյուղի մոտ գտնվող դամբանաբլուրից[4]։ Մի փոքր ձևափոխումներով նրանք համադրված են Էլարում հայտնաբերված ձկնազարդ (№ 1813/16) և թռչնազարդ (№ 1805/32) ցածրադիր կճուճների վրա (սախտ. VIII)։



Նկ. 89. Գուհատաղա կճուճ Էջմիածնից։

Հանդիպում են կճուճներ, որոնց վրա վերը նկարագրված զարդամոտիվները առանձին-առանձին են հանդես դալիս, օրինակ, կան կճուճներ, որոնց վրա միայն ալիքածածկ եռանկյուններ են նկարված՝ ծայրերին օզակներ (Էջմիածնի № 1 դամբանաբլուրում՝, Ոսկեվազից՝ Աշաարակի շրջան № 555/17, Ազնաբյուրտից[6], Շոռ-Թեփեից[7]) կամ միայն զիդզադ ալիքազարդ երիզաժապավեններով, օրինակ՝ Նորատուսի դամբարանից[8], Ոսկեվազից (№ 555/16), Շոռ-Թեփեից[9]։ Երբեմն այս ժապավեններով առաջացած անկյունները զարդարված են ջրջաններով-օզերով, օրինակ, Էջմիածնից բերված կճուճներից մեկը (նկ. 89, № 556/3), Շոռ-Թեփեի կճուճները[10], կամ ազնիկի և մարդու նկարով Նախաջիրից հայտնաբերված կճուճը[11] և այլն։

Ինչպես վերը տեսանք, երկդաշտ և միադաշտ կոմպոզիցիայով հիդրիա-

---

[1] Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 83, 397, ադ. LXXXI։

[2] Նույն տեղում, էջ 399, ադ. LXXXII։

[3] О. А. Абибуллаев, նշվ. աշխ., ադ. 3_2։

[4] В. Г. Алиев, նշվ. աշխ., էջ 119, նկ. 3_1—$_3$, նույնի, К изучению культуры расписной керамики в Азербайджане, Материальная культура Азербайджана. т. VI, Б., 1965, стр. 64—65, табл. 1_2.

[5] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 68, ադ. II^5։

[6] В. Г. Алиев, Новые материалы о культуре расписной керамики в Азербайджане, рис. 3_4.

[7] О. А. Абибуллаев, նշվ. աշխ., ադ. $XXXV_{2,4}$։

[8] А. А. Мартиросян, նշվ. աշխ., ադ. IV_6։

[9] О. А. Абибуллаев, նշվ. աշխ., ադ. $XXXV^6$։

[10] Նույն տեղում, ադ. $XXXV_7$։

[11] Նույն տեղում, ադ. $XXXV_8$։

ներր համաաեզ են հանդես դալիս, ժամանակակից են միմյանց, նրանց զարդամոտիվները միջին բրոնզի ամենասիրվածներն են և բաղմաթիվ օրինակներով հատնի են Հայկական լեռնաշխարհում։

Դաոնիի վերը նկարագրված խեցեզենի երկրորդ խումբն իր զուգահեռներով հանդերձ, հիդրիայի ձևով և զարդանախշերի բազմաթիվ մանրամասներով կապվում է վաղ բրոնզի խեցեզենի հետ, հանդիսանալով նրա անմիջական ժառանդորդը։



Նկ. 90. Հիդրիա՝ Արևիկի վաղ բրոնզադարյան բնակատեղիից։

Միջին բրոնզի հիդրիաների և նրանցից ծավալով փոքր նման կաթսաների նախատիպը կարելի է համարել Արևիկում հայտնաբերված հիդրիան (№ 2289/12), որն իր կիսագնդաձև կանթերով դեռևս կապվում է վաղ բրոնզի հետ, սակայն ձևով, վարդադույն խեցիով, շուրթի ձևավորումով, բարձրադիր վզով անմիջականորեն կապվում է միջին բրոնզի հիդրիաների հետ (նկ. 90)։ Թեև ոչն դունադարդ չէ, սակայն խազելու եղանակով վզի վրա կատարված ուղ-

ղահայաց իջնող գծախմբերը հիշեցնում են միջին բրոնզի կունաղարդ խեցեղենի վրի ուղղահայաց իջնող նման ժապավենների խմբերը։

Այսպիսով, Արևիկի հիդրիան կապող օղակ է, վաղ բրոնզի և միջին բրոնզի խեցեղենի միջև։ Կորցնելով նիսադ-դաձև կանթերը, զոնուլով ավելի վերասլաց և դունաղարդվելով, հիդրիան լայն տարածում է դրտնում միջին բրոնզի խեցեղենում։

Ինչպես նշվեց, միջին բրոնզի մի շարք զարդանախշեր նույնպես ժառանդարար ընդօրինակվել են վաղ բրոնզի զարդանախշերից և նոր հրանդով, կատարման նոր եղանակով կաղմել հիդրիաների կոմպոզիցիաների մտոերը։ Օրինակ՝ միջին բրոնզի հիդրիաների վրի հիմքից սկիզբ առնող, կամ երկրորդ դաշտում տարածվող եռանկյունիների շարանը՝ ղարդարված ուդզահայաց իջնող կամ թեք դասավորութեամբ ալիքաձև ժապավեններով, իրենց նախատիպն ունեն Շենդավթի մի շարք կավամանների վրա (№ 1618/3, № 1330/47, 67 և այլն), որտեղ վրի հիմքի հորիզոնական ժապավենից ներքև տարածվում են եռանկյունիների շարաններ, այն տարբերութեամբ, որ նրանց հատող դծերը ալիքաձև չեն, այլ ուղղադիծ (նկ. 87₂, ₁₀)։ Ջպետք է մոռանալ, որ վաղ բրոնզի շրջանի վերոհիշյալ կավամանների ձևը, որակը, գույնը. զարդանախշման եղանակը կատարելապես այլ է, տարրեր միջին բրոնզի խեցեղենից։

Միջին բրոնզի հիդրիաների զարդանախշերին բնորոշ զիդզագ ժապավենները՝ ներսում ալիքաղարդ և նրանով առաջացած անկյուններում թռչունների տեղադրումը նույնպես ընդօրինակվել են վաղ բրոնզի սև փայլեցրած խեցեղենի զարդանախշերից։ Դրա լավագույն և ցայտուն օրինակը կարելի է տեսնել Շենդավթից հայտնաբերված կարասի վրա[1], որտեղ անկյուն կազմող ժապավենների միջով նույնպես անցնում է ալիքաձև դուտի և այդ ժապավեններով առաջացած անկյուններում պատկերված է թռչուն (նկ. 78)։ Ճիշտ նման կոմպոզիցիայով (սակայն առանց ալիքաձև գուտու) կավամանի մաս հայտնաբերվել է Կառնուտում (№ 1478/12բ, թերի է)։ Իհարկե թռչուններն իրենց ձևով տարբերվում են միջին բրոնզի թռչուններից։

Որոշ փոփոխություններ է կրում կոմպոզիցիոն կմախքը, օրինակ, վերի բրոնզի անկյուն կազմող ժապավենների վերջավորությունների բազմադալար, մոնումենտալ պարույրները միջին բրոնզում վերանում են, իսկ անկյուն կազմող ժապավենը վեր է ածվում շարունակական զիդզադի։ Բացի այդ, վաղ բրոնզեդարյան սև փայլեցրած խեցեղենին բնորոշ ժապավեններով կազմված անկյունների զարդանախշումը՝ փոսիկների և ճառագայթաձև ատոսների, թռչունների և բազմադալար պարույրների, անկյունների համադրությամբ, միջին բրոնզում դարձյալ պարզեցվում է։ Այդ անկյունները, ինչպես տեսանք, զարդարվում են կամ թռչունով կամ օղերով կամ նրանց խմբերով։

Վերջապես, ի տարբերություն վաղ բրոնզի, կավամանների վերին մասը զարդանախշվում է ոչ թե մեկ երեսից, այլ բոլոր կողմերից։

Սակայն միջին բրոնզի դունաղարդ խեցեղենի զարդանկարում դործյալ երկրադործ-անասնապահների հոդեբանության, աշխարհայացքի բարդ և բազմազան զաղափարական պատկերացումներն ենք դտնում։ Զարդանախ-

---

[1] Ա. Սարդարյան, նշվ. աշխ., նկ. 40։

Տախտակ V. Թուշնազարդ կնոճ էջմիածնից։

շերի կոմպոզիցիոն հիմքը ղարձյալ բնության երեք տարրերներն են, երեք հզոր ուժերը՝ երկինքը, երկիրը և սարերկրյա ծովը, որոնք տարբեր պատկերներով են արտահայտված։ Երկինքը՝ արևի սիմվոլն արտահայտող շըրջաններով, զույգ թռչուններով, երկնային ջրերը, անձրևը պատկերող ալիքների խմբերով, երկիրը՝ դաշտերի սիմվոլն արտահայտող քառանկյունիներով կամ շեղանկյունիներով, ստորերկրյա ծովը՝ թռչուններով, ձկներով։

Երկգաշտ թե միադաշտ կոմպոզիցիաների լեյտմոտիվը ջրի սիմվոլիկան արտահայտող ալիքաձև գոտիներն են։ Նրանցով են ղարդարված կոմպոզիցիայի մասերը կազմող բնության երեք հզոր ուժերն արտահայտող բոլոր տիպի ֆիգուրները՝ վդի ուղղահայաց ժապավենները, հորիզոնական գոտիները, նրանցից կախված մեռոպները, շերոնները, քառանկյունիները, շեղանկյունիները, անգամ թռչունները և ձկները։

Ելնելով գունազարդ հիդրիաների և նմանատիպ, ծավալով ավելի փոքր կճուճների մեծ մասի զարդամոտիվների կոմպոզիցիայից, կարելի է եզրակացնել, որ այդ զարգապատակերները նվիրված են եղել հավանաբար երկնային, երկրային և սարերկրյա ջրերը հմայելու, դյութելու և պտղաբերություն ապահովելու ծիսակատարությանը։

Այսպիսով, Գառնիի նկարագրված հիդրիաների խումբը և նրա զուգահեռների մեծ մասը թեև պատահական են, ուղեկցող նյութեր չունեն, սակայն, ինչպես տեսանք, անմիջականորեն բխում են վաղ բրոնզի խեցեղենից, շարունակում են նրա ավանդույթները մի նոր որակով, հետևաբար, անշուշտ, պետք է սկիզբ առած լինեն բրոնզի վաղ փուլերում, իրենց գոյությունը պահպանելով դարեր շարունակ, իբրև միևնույն էթնիկ միջավայրում ստեղծված մշակույթի հաջորդական դրսևորումներ։

3. Գառնիի գունազարդ խեցեղենի երրորդ խումբը կազմում են կիսագնդաձև իրանով թասերը և թասերի բեկորները։ Բոլոր թասերն ունեն մի փոքր շեշտված պսակ, որի հիմքով արտաքինից անցնում է խորաքանդակ հորիզոնական գոտի։ Բոլորի շուրթերը զարդարված են ուղղահայաց իջնող զուգահեռ ժապավենների խմբերով։

Գառնիի բնակատեղիում հայտնաբերվել են տարբեր զարդանախշերով թասերի բեկորներ։

Թասի բեկորներից մեկի վրա (№ 2099/58), շուրթից ցած պահպանվել է լայնադիր եռանկյունաձև շերոնի մասը՝ թեք ալիքազարդումով, իսկ նրանից ձախ՝ զուգահեռ իջնող ալիքազարդ երիզաժապավենների մասը (աղ. $XXVIII_4$)։ Այս թասի վրա փաստորեն կրկնվում է վերը նկարագրած հիդրիաների զարգանկարը, որն այնքան բնորոշ է միջին բրոնզի գունազարդ խեցեղենի համար։

Ճիշտ նման զարդանախշով մի ամբողջական թաս հայտնաբերվել է Լճաշենում (№ 2261/9), մյուսը բերվել է Էջմիածնից (№ 556/45, վերջինիս եռանկյունիների միջի ալիքները հորիզոնական դասավորություն ունեն և այդ եռանկյունիների ծայրերից կախված են ռելիեֆ օղակներ)։

Գառնիում հայտնաբերված մեկ այլ թասի բեկոր զարդարված է չորս թեք, սակայն իրար զուգահեռ ժապավենների խմբերով, որոնք սկսվում են շուրթից և ավարտվում ուսերի հորիզոնական գոտու վրա, ապա անկյուն կազմելով շարունակվում (աղ. $XXVIII_7$, № 2099/58)։ Նման զարդանախշով միակ

բեկորն է սա դունաղարդ խեցեղենում և զարդանախշման այդ մոտիվով ավելի ղուտ կապվում է ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլերի թասերի զարդամոտիվների հետ, այն տարբերությամբ, որ վերջիններիս վրա վերոհիշյալ զարդանախշերը կատարված են ոչ թե դույնով, այլ փայլեցման եղանակով։ Սրինակ, Գեղարոտի թասերի զարդանախշերը (№ 2078/1, 5, 28) կամ Լճաշենի կրոմլեխների թասերի (№ 2009/12), Արթիկի դամբարանների թասերի զարդանախշերը[1] և այլն։

Վերոհիշյալ խմբի երրորդ թասի բեկորը դարդարված է իրար մեջ հադնող, եռանկյուն կաղմող շղթայով (աղ. XXVIII$_6$, № 2099/57)։

Ճիշտ նման թաս, սակայն քառաշար եռանկյունիների խմբերով, հայտնաբերվել է Շոռ-թեփեում[2]։



Նկ. 91. Կավամանի բեկոր՝ փորագիր զարդանախշերով և փոսիկով զարդարված, Գառնիի ամրոցից։

Բացի վերոհիշյալ հիմնական խմբերից, Գառնիի ընակատեղիում հայտնաբերվել են դունաղարդ կավամանների բեկորներ, որոնց ձևը որոշելը դրժվար է, սակայն նրանք հետաքրքիր են իրենց զարդանախշերով։ Կան բեկորներ՝ զարդարված հորիզոնական բազմաշար ալիքներով (№ 2099/57), իրար մեջ հադնող անկյուններով (№ 2099/14), կամ ուղղահայաց իջնող իրար դուպահեռ ալիքների խմբերով (աղ. XXVIII$_{10}$, № 1964/45)։ Այս վերջինս իր զարդանախշումով հիշեցնում է Աիլաթյանում հայտնաբերված թասի զարդանկարը, որտեղ շուրթից ուղղահայաց իջնող չորս ալիքներից բաղկացած խմբերը զարդարված են սանրատամ շեղանկյունիների շղթայով՝ ուղղահայաց դասավորությամբ (№ 1114)։

Հետաքրքրական է նաև ուռուցիկ իրանով, նրբախեցի, լավ թրծումով և հարթր խեցիով կճուճի մասը (1966 թ. № 36), որի վրի վրա պահպանվել է ինչ-որ զարդանկարի հետք։ Վրի հիմքի թույլ շեշտված հորիզոնական ռելիեֆ դոտիներից ցած նկարված է իրար մեջ հադած դույդ մեծ և փոքր կիսաշրջանների շղթա։ Մեծ կիսաշրջանների անկյունները դրսից միացված են փոք-

[1] Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, 1963, Ереван, стр. 115, табл. 21, стр. 117, табл. 23.

[2] О. А. Абибуллаев, Նշվ. աշխ., աղ. XXV$_9$։

րիկ կիսաշրջաններով և այս բոլորը ներքևում շրջափակվում են ալիքաձև հորիզոնական դոտիով (աղ. XXXVIII₉)։

Այս զարդանախշը իր զուգահեռը դեռևս չունի։

II. Փորագիր և դրոշմազարդ խեցեղենի մի շարք օրինակներ են հայտնաբերվել Դառնիում, որոնք ունեն շադանակազույն, մոխրազույն, մարմնագույն և սեւ փայլեցրած մակերես։

1. Փորագիր զարդանախշերով խեցեղենի մի խումբ հայտնաբերվել է ամրոցի II աեզամասում, իրար բավականին մոտ՝ 20 թ, 20 ծ և 17 ժա քառակուսիներում, 1,3—1,5 մ խորությունից։ Նրանցից ոչ հեռու, 16 թ, քառակուսում, նույն խորությունից հայտնաբերվել է նաև դունազարդ խեցու բևեռը, որն իր զարդանախշերով հիշեցնում է Թազաքենդի տիպի խեցեղենը (№ 1964/40)։ Վերոհիշյալ բոլոր քառակուսիներում 1,5—1,7 մ խորությունից ոչ սկսվում են վազ բրոնզեդարյան մշակութային շերտերը։

Գնդաձև իրանով, շատ կարճ, ներճկված վզով և շեշտված պսակով դորշադույն մի կավամանի մաս (№ 1964/44) հայտնաբերվել է 20 թ. քառակուսում (նկ. 91)։ Վզի հիմքում երկու խորաքանդակ դոտիներով առաջացած ժապավենը եզևնաձև փորված զարդանախշեր ունի, որոնք ընդմիջվում են ներճկված փոսիկով։ Իրանի ուռուցիկ մասը զարդարված է գծածածկ զիգզագ լայն ժապավենով, որն ընդելուզված է սպիտակ ներկով։

Այս կավամանը իր մի շարք հատկանիշներով հիշեցնում է վաղ բրոնզեդարյան խեցեղենը, սակայն հիմնականում կապվում է միջին բրոնզի խեցեղենի հետ։ Օրինակ՝ կավի որակով, գույնով և իր ձևով այն օտար է վաղ բրոնզեդարյան խեցեղենին, սակայն զարդանախշման մոտիվներով դեռևս արձագանքում է նրան. ունի ներճկված փոսիկ, եզևնաձև զարդանախշեր, որոնք արդեն նոր եղանակով են կատարված, ոչ թե սեղմելու կամ դծելու, ինչպես ընդունված էր վաղ բրոնզի շրջանում, այլ կտրելու, փորելու եղանակով։

Ճիշտ նման զարդանախշերով է զարդարված 17 ժա քառակուսում հայտնաբերված դորշադույն թասի բեկորը (№ 1964/31)՝ դուրս ճկված կլորացող շուրթով և սահուն կլորացող իրանով։ Թասի ուսերը նախորդի համեմատ զարդարված են ավելի լայն ժապավենում ընդգրկված սրածայր դործիքի օգնությամբ կատարված եզևնաձև զարդանախշերով, որոնք ավելի խորն են փորված։ Ժապավենից ներքև նույնպես զարդանախշեր են՝ կտրելու եղանակով կատարված։

Գծածածկ զիգզագների զարդանախշը մեծ III հազարամյակի սեւ փայլեցրած, դեզակազմ խեցեղենի ամենասիրված զարդամոտիվներից է։ Այն մեծ մասամբ զարդարում է կավամանի վզի վերին մասը և կարծես մի տեսակ ֆրիզի դեր է կատարում (նկ. 87₁, ₇, ₁₃, ₁₄, ₃₂), կամ թե հաշորդ ժապավենում հանդես է գալիս սարաահեսակ պաճուճանքներով՝ գծածածկ ժապավենիկներով (նկ. 87₆)՝ անկյուններով և եռանկյուններով պարուրված (նկ. 87₉). Նման զարդանախշերով խեցեղեն հայտնաբերվել է Դառնիում (№ 2234/136, № 2235/69), Դվինում (1959 թ. պեզումներ) և բադմաթիվ օրինակներով հայտնի է Շենգավթում։

Դարավերջում գծածածկ ժապավենները վզից իջնում են կավամանի ուսերին, դառնում պարզեցված, մեկուսի, առանց այլ և այլ զուգորդումների, սակայն դարձյալ նուրբ գծային, սեղմելու եղանակով կատարված։ Նման

զարդանախշերով կավամաններ հայտնաբերվել են Ջառջառիսում (նկ. 92, № 1893/3), Լենինականի մսի կոմբինատի մոտ գտնվող դամբանադաշտում (նկ. 93), Էջմիածնում (№ 776/71) և Արթիկում (նկ. 92, № 2065)։

Թրիալեթիում, Բեշտաշենի ամրոցի հյուսիս-տրնեյան մասում, մթա III հազարամյակի շերտի վերին հորիզոնում գծածածկ զիգզագ ժապավենների շարքերով սև փայլեցրած խեցեղենի հետ, շերտագրական նույն պայմաններում հայտնաբերվել են գունազարդ խեցեղենի բեկորներ[1]։ Բեշտաշենի խեցեղենի վերոհիշյալ խումբը նույնպես մթա III հազարամյակի վերջով է թվագրվում։



Նկ. 92. Կավամաններ փորագիր զարդանախշերով՝ Ջարջառիսից (1) և Արթիկից (2)։

Վաղ հատկանիշներ ունի նաև Բանիսխեվիում հայտնաբերված սև փայլեցրած կավամանը՝ զարդարված գարգոյալ գծածածկ, զիգզագ ժապավենով և նրանով առաջացած անկյուններում՝ գծածածկ երկհարկ եռանկյուններով[2]։ Այս կավամանի վրա ևս գծածածկ զիգզագ ժապավենը մոնումենտալ է, իսկ նրա անկյուններում ամփոփված եռանկյուն մեջ դասավորված երկհարկ գծածածկ սեպեր-եռանկյուններն սկիզբը կարելի է փնտրել մթա III հազարամյակի խեցեղենում, որի նախահիպը հանդիպում է Կաոնուտի խեցեղենի վրի հիմքի զարդանախշերում՝ կատարված սեղմելու, սկոսային եղանակով (№ 1478/38)։ Այդ զարդանախշի նուրբ գծային եղանակով կատարված բազմաթիվ օրինակները կարելի է տեսնել Շենդավթի խեցեղենի վրա, նրանով են զարդարված մեանդրներով առաջացած անկյունները (№ 1442/86, № 1618/90, 241, 243)։

Վրաստանում Բանիսխեվիի կավամանին ժամանակակից կարելի է համարել Խովլեում պեղված առաջին դամբանաբլուրի № 2 դամբարանի երկկոնաձև սև փայլեցրած նրբախեցի կավամանը՝ ուսերի վերին մասում երկշարք, դադաթներով իրար ուղղված եռանկյուններ և նրանցից ցած, իրանի միջին մասում վերը նկարագրված սուրանկյուն գծածածկ եռանկյունիների զարդանախշը, որը զուգորդվում է ներճկված փոսիկի հետ[3]։

Այսպիսով, գծածածկ զիգզագ ժապավեններով զարդանախշը, ինչպես Գառնիի վերոհիշյալ կավամանների օրինակով, այնպես էլ նրա զուգահեռ-

---

[1] Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 112, 116—117, տպ CXXI CXXII:

[2] К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-тепе, стр. 90, рис. 20₃, стр. 96, рис. 28₁.

[3] Պեղումները Տ. Ջուրինիշվիլու

Տախտակ VI. Թռչնազարդ Հիդրիա Գառնիից։

ներով հանդերձ, միջին րոնզի դարաշրջանում դառնում է մոնումենտալ, դերիշխում է ամրողջ կավամանի վրա և, ի տարբերություն նախորդող փուլերի, նոր եղանակով է կատարվում՝ փորագրվում է։

Լճաշենի դամրանաբլուրներից մեկի (№ 14) շեկ-դեղնավուն խեցեղենը նույնպես զարդարված է միայն խոբաջանդակ, դծածածկ ղիղղադ ժապավիններով (№ 2049/233, 239, 24 և այլն)։

Նման դիզդող մեկուսի ժապավիններ հանդես են գալիս նաև դունաղտրդ խեցեղենի վրա։ Օրինակ, էջմիածնի Յանդարանից բերված կճուճներից մեկի փայլուն, կարմիր ֆոնի վրա զիգզագ ժապավեն է նկարված սև փայլուն ներկով (№ 556/26)։



Նկ. 93. Գավաթ Լճնինակոնից։

Գառնիի վերոհիշյալ կավամանների վրի նղևնաձև ակոսաշարը իր զուգահեռներն ունի Թրիալեթիի VI դամբանարլուրի խեցեղենում, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս վրա այն կատարված է ռելիեֆ գոտու ձևք կողերի վրա (ՎՊԲ № 9—63—403)։

Այս խմբի մեջ մտնող մեկ այլ մոխրագույն խեցու բեկոր ունի դծածածկ, անկյունավոր ժապավիններ (աղ. XXXI₃, № 1964/31)։ Այն կատարված է նույնպես խորը ակոսներով, փորագրելու եղանակով և կարելի է թվագրել նույն ժամանակով, ինչ որ նախորդները։ Նրա զուգահեռներին հանդիպում ենք Ուղերլիկ-Թեփեի ստորին շերտի խեցեղենում[1], Վրաստանում՝ Սարիթ-Կղչայի դամբանաբլուրներում[2], Թրիալեթիի VI (ՎՊԲ № 9—63—401), XIV (ՎՊԲ № 9—63—671), XVI, XXXVI (Թոփ-քար № 1) դամբանաբլուրներում և այլն։

Վերոհիշյալ խմբի մեջ մտնող սև փայլեցրած հաստատեցի կավամանի բեկորը (1965 թ. № 10) նույն շերտին է վերաբերվում և հայտնաբերվել է նախորդներին բավականաչափ մոտ, 20 ժ քառակուսում։ Այն զարդարված է խորը կտրած, ձևք, տարբեր ուղղություններով տարածվող զուգահեռ դծերի խմբերով, որոնք սահմանազատվում են հորիզոնական գոտիներով (աղ. XXXI₁)։ Այդ գոտիներով առաջացած ներքևի, երրորդ ժապավենում, ձևք դծերը ամրողջ մակերեսը չեն ղրաղեցնում, նրանով առաջացած անկյունում սև փայլեցրած մակերեսի վրա ուղղահայաց դիրքով երիք կետեր են շարված։

Այս խեցին իր կետային և ուղղադիծ զարդերի համադրությամբ կարելի է համարել մթա III հազարամյակի խեցեղենի ժառանգորդը։ Ուղղադիծ երկրաչափական ֆիգուրների կետազարդումը խիստ բնորոշ է Կիրովականի՝ մթա III հազարամյակի խեցեղենի համար։ Այն բազմաթիվ օրինակներով հայտնի է Քոսի-ճոթեր բնակատեղիից (№ 2127/1, 2, 6, 7, 36, 37, 1961 թ. № 13, 17, 20,), Թազավորանիստից (№ 1475/25, № 2188/8), Մաշտոցի բլուրից (կդթ.

---

[1] К. Х. Кушнарева՝ նշվ. աշխ., էջ 87, նկ. 17,, 18, 22։

[2] О. Джапаридзе, Археологические раскопки в Триалети в 1957—1958 годах, стр. 43, табл. VI, VII.

№ 47, 49, 50), Գառնիի բնակատեղիից (№2234/1331)։ Վրաստանում այն բնորոշ է Կանաչ-Թեփե դամբանաբլուրի խեցեղենին[1], ինչպես նաև Թռիալեթիի XI[2] և Թեթրիծղարոյի դամբանաբլուրներին։ Զարդանախշման այս եղանակը շարունակվում է նաև Թոփ-քար № 2 դամբանաբլուրում[3]։

Այսպիսով, Գառնիի փորագիր զարդանախշերով խեցեղենի վերոհիշյալ խումբը անշուշտ նախորդել է Կիրովականի դամբանաբլուրի խմբին, ժամանակակից է Թռիալեթիի միջին բրոնզի V, VI, XVI, XVII, XXXIV, XXVI (Թոփ-քար № 1) և XLV (Թոփ-քար № 2) դամբանաբլուրներին, հետևա-



Նկ. 94. Շագանակագույն կճուճ կետագիծ զարդանախշերով՝ Գառնիից։

բար նախորդել է նաև Կիրովականի խմբին հասակակից Թռիալեթիի I, III, VII և XV դամբանաբլուրներին[4]։

2. Կետագիծ զարդանախշերով խեցեղեն։

Նման զարդանախշերով մեկ ամբողջական կճուճ է հայտնաբերվել կուլխոզի դոմերի մոտ՝ վերը նկարագրված թոշնազարդ հիդրիայի հետ։

---

[1] Б. А. Куфтин, Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, табл. XXIV.

[2] Նույն տեղում։ Նույնի, Археологические раскопки в Трналети, стр. 407. աղ XXXVI.

[3] О. Джапаридзе, նշվ. աշխ., էջ 40, 43, աղ. II;

[4] Թռիալեթիի նյութերի հետ մանրամասն ծանոթանալու համար շնորհակալություն եմ հայտնում Վրաստանի պետական թանգարանի աշխատակից Է. Գոգաձեին։

Կճուճը մուգ շագանակագույն է, փայլեցրած մակերեսով (նկ. 94, № 1965/225), բարձր վզով, դուրս ճկված շուրթերով, ուռուցիկ ուսերով։ Վզի հիմքը զարգարված է քառաշար փորված կետագծային շրջագծով, նրանից ցած, կճուճի ուսերին սարածվում են գագաթներով ցած տասներկու սուրանկյուն եռանկյուններ, որոնք սահացվել են ութից-տասը շարք կետագծով։ Այս եռանկյունիները ներքեից եզերվում են նույն եղանակով կատարված զիգզագ ժապավենով։ Զարգանախշերի դաշտում փայլաներկը հեռացված է։ Այսպիսով, ստացվում է անփայլ զարգանախշերի ստոր դույնի և նրանց միջև ընկած փայլուն գոտիների մի զեղեցիկ համադրություն, դունային մի յուրօրինակ խաղ։

Նույն եղանակով է կատարված գարձյալ կոլխոզի գոմերից ոչ հեռու հայտնարերված, վերը նկարագրված գամբարանային առաջին կոմպլեքսի խեցեղենի շագանակագույն կավամանի ուսերի զարգանախշը, միայն վերջինիս վրա այդ կետագծերը ամփոփված են ժապավենի մեջ (ազ. XXV₁)։



Նկ. 93. Կճուճ կետագիծ զարդանախշերով՝ Էլարից։

Վերը նկարագրված երկարավիզ շագանակագույն կճուճն իր ձևով և զարդանկարով կարելի է համեմատել Կիրովականի գամբանարլուրի սև փայլեցրած, նույնպես բարձրավիզ և ուռուցիկ ուսերով կճուճների հետ, որոնց մեծ մասի ուսերը զարգարված են Գառնիի նման զիգզագ ժապավենով, իսկ նրանցից վեր առաջացած անկյունները՝ եռանկյուններով (№ 1861/10, 11), սակայն երկուսի զարգանախշերը մի փոքր սարբերվում են միմյանցից։ Գառնիինը կատարված է կետագիծ, իսկ Կիրովականինը՝ կետաշար գծերի գրոշմիչով։

Գառնիի վերոհիշյալ կճուճն իր անմիջական զուգահեռներն ունի Էլարում։

Էլարի ավազահանքում, գամբարաններից մեկում հայտնարերված բաց շագանակագույն կավամաններից ինը (№ 1805/1—3, 5—7, 13, 18, 19) ձևով կրկնում են Գառնիի վերը նկարագրած կճուճը (ազ. XXIV₁)։ Նրանցից մեկի ուսերը (նկ. 95, № 1805/13) զարգարված են չորս զույգ կետագիծ եռանկյուններով, կատարված նույն եղանակով, ինչ- որ Գառնիի կճուճի զարգանախշերը։

Այսպիսով, Գառնիի վերոհիշյալ կճուճն իր զուգահեռներով հանդերձ հարում է Կիրովականի գամբանարլուրին և ժամանակով կարող է անգամ մի փոքր նախորգած լինել նրան։

3. Սահմնաշար «քայլոզ» գրոշմիչով կատարված զարգանախշերով խեցեղեն։

Այս խմբի մեջ են մանում բնակատեղիում հայտնարերված սև փայլեցրած թասի բեկորը (ազ. XXXII₃, 1966 թ. № 19) և ամրոցի մոտ, բակերից մեկում հայտնարերված երկկոնաձև իրանով շագանակագույն կավամանը

(աղ. XXXII$_{1}$, № 1963/86)։ Նրանց ուսերը զարդարված են բազմաշար եռանկյունիների շղթայով, կատարված ատամնաշար դրոշմիչով։

Բացի այդ, բնակատեղիի II տեղամասի 15 ա քառակուսում, վերը նկարագրված մոնոխրոմ հիդրիաների բեկորների հետ, որոնք զարդարված էին վայրի կենդանիներով, թռչուններով և կարապներով, հայտնաբերվել են նաև խողովակաձև բարձր վզով, ուռուցիկ ուսերով սև փայլեցրած և բաց դարչնագույն կճուճների մասեր (1966 թ. № 35), որոնք զարդարված են ատամնաշար դրոշմիչով (աղ. XXXI$_{2}$, ե)։

Սև փայլեցրած կճուճների բեկորներն ունեն վարդագույն աստառ։ Մեկի վզի հիմքում խորաքանդակ գոտիներով առաջացած ռելիեֆ զույգ ժապավենները զարդարված են խիտ դասավորված ատամնաշար թեք գծերով։

Մեկ այլ կավամանի ուռուցիկ մասում, ոչ շատ խորը գոտիներով առաջացած ժապավենը ծածկված է դարձյալ ատամնաշար թեք գծերով։ Նույն զարդանախշը կրկնվում է նաև բաց դարչնագույն խողովակաձև վզով կճուճի վրա։ Այն վզի հիմքում ունի ռելիեֆ ժապավեն՝ ատամնաշար թեք գծերով, իսկ ուսերին ունեն անկյուն կազմող կամ եղևնաշար դասավորությամբ զարդանախշեր, որոնք վերևից և ներքևից եզերված են խորաքանդակ հորիզոնական գոտիներով (աղ. XXXI$_{4}$)։

Նկարագրված կճուճների բեկորներն իրենց ձևով, սև փայլեցրած մակերեսով և վարդագույն աստառով, ինչպես նաև զարդանախշերով ու կատարման եղանակով. իրենց անմիջական զուգահեռներն ունեն Կիրովականի դամբանաբլուրի խեցեղենում։

Կիրովականի սև փայլեցրած բոլոր կճուճները վզի հիմքում ունեն մեկ կամ երկու ռելիեֆ գոտիներ, որոնց մեծ մասը ծածկված է Գառնիի տիպի ատամնաշար, թեք գծիկներով (աղ. XXVI$_{3}$)։ Նման կճուճների մեծ մասի ուսերը զարդարված են զիգզագ, խոշոր ժապավեններով, որպիսին մենք տեսանք II խմբի I ենթախմբի թաղարի վրա, սակայն ծածկված ոչ թե ուղիղ, այլ ատամնաշար գծերով։

Հաճախ այդ զիգզագ ժապավեններով առաջացած անկյունները զբաղեցնում են ատամնաշար գծածածկով եռանկյունիները (№ 1861/10 և 11ա, դ, զ), կամ փորագիր օղակներով եռանկյունիները (№ 1861/11 ե)։ Այս զարդանախշերը մեծ մասամբ լցված են սպիտակ ներկով։

Այսպիսով, ինչպես Գառնիի սև և բաց դարչնագույն խեցեղենի վերոհիշյալ խմբում, այնպես էլ Կիրովականի դամբանաբլուրի խեցեղենում երևան է գալիս զարդանախշման մի նոր եղանակ, որն օտար է միջին բրոնզի վաղ փուլին։ Փաստորեն այստեղ մենք տեսնում ենք ռունազարդ ալիքների իմիտացիան՝ կատարված նոր եղանակով։

Շեղանկյունաձև դաշտերի և հորիզոնական ժապավենի մեջ ամփոփված նման խորաքանդակ ալիքներով է զարդարված նաև Նորաշենում հայտնաբերված սև փայլեցրած, հիդրիայի տիպի կճուճը (գտնվում է Նոր Բայազետի գավառագիտական թանգարանում)։

Ատամնաշար «քայլող» դրոշմիչով կատարված զարդանախշերն հատկապես բնորոշ են Թրիալեթիի միջին բրոնզի դամբանաբլուրների խեցեղենին, որտեղ այն հանդես չ գալիս նրբագեղ տարատեսակ երկրաչափական ֆիգուրների մեջ ամփոփված։ Որոշ դամբանաբլուրներում (I, VII) նրանք կատարված են ճիշտ նույն եղանակով կավամանների վզի հիմքի ռելիեֆ գո-



Տախտակ VII. Կեռ-ճէներ էջմիածնից (ձախից) և Ադավճառնից (աջից):

տիների վրա, ինչպես Գաոնիում և Կիրովականում (ՎՊԲ № 9—63—46, 532, 533, 535, 537)։ Բացի այդ, Թրիալեթիի I և VII դամբանաբլուրները Գաոնիի և Կիրովականի հետ առնչվում են նաև հիդրիայի տիպի դունազարդ կավամաններով[1]։

Այսպիսով Գաոնիի խեցեզենի վերոհիշյալ խումբն իր ազերաններն ունի Կիրովականի դամբանաբլուրում, իսկ վերջինիս ժամանակակից է Թրիալեթիի XV դամբանաբլուրը, որը մի շարք գիտնականների ե կ. Շեֆֆերի կողմից թվադրվում է մթա 1550—1400 թթ.[2]։ Չնայած դրան, Կիրովականի դամբանաբլուրի նյութերն իրենց զարդամոտիվներով դեռևս սերտորեն առնչվում են մթա III հազարամյակի մշակույթի հետ։

Ինչպես տեսանք, Կիրովականի կավամանների ուսերի զիդզագ ժապավենները երբեմն դարդարված են եռանկյունիներով, երբեմն էլ սուրանկյուն կարճ ժապավենների համադրությամբ (№ 1861/11բ)։ Զարդանախշման այս հղանակը, ինչպես վերը տեսանք, շատ բնորոշ է Շենդավթի նրրադիծ զարդանախշերով խեցեզենին։ Մթա III հազարամյակում բավականաչափ սիրված գծածածկ մեանդրները (նկ. 87) Կիրովականի կճուճների վրա վերածվում են շարունակական շրջանակների, զարդարված փոքրիկ օղակներով (ադ. XXVI₃, № 1861/8)։ Սև փայլեցրած որոշ կճուճներ զարդարված են ռելիեֆ կարճ ժապավեններով, որոնք երբեմն ավարտվում են կիսադնդերով (ադ. XXVI₃, № 1861/9), երբեմն էլ նշաձև ռելիեֆ զարդերով (№ 1861/19)։ Խեցեզենի այս խումբը ևս վերապրուկային ձևով կրկնում է մթա III հազարամյակի զարդանախշերը։ Ռելիեֆ կիսագնդերն ավելի բնորոշ են խեցեզենի էլարի խմբին, իսկ նշաձև վերջավորվող դոհաները՝ Քյոզսիի (№ 1900/38), Կաոնուաի խեցեզենին (№ 1478/7)։

Զարդամոտիվների կապը կարելի է տեսնել նաև Կիրովականի զունազարդ կճուճների վրա։ Օրինակ՝ զունազարդ մեծ հիդրիայի զարդանախշերում շեղանկյունաձև հրապարակները՝ կենտրոնում համակենտրոն շրջան (ադ. XXXIII₂, № 1861/27), կրկնում են խեցեզենի Շրեշ-բլուրի խմբի զարդանկարը։ Մեկուսի շեղանկյուններ՝ կենտրոնում փոսիկ, բնորոշ է Մաշտոցի բլուրի խեցեզենին, երկծալ շեղանկյուններ՝ Շենդավթին (№ 1618/28, № 1330/131) և այլն։

Կիրովականի նկարագրված հիդրիայի զարդանկարին ավելի մոտ է Քոսիճաոթերում հայտնաբերված սև փայլեցրած խեցու բեկորի զարդանկարը, որտեղ գծածածկ ժապավեններով և վերևից անկյունային ժապավենով առաջացած շեղանկյունաձև հրապարակի կենտրոնում դծված է գծածածկ շեղանկյուն (1965 թ. № 9)։

Կիրովականի դունազարդ խեցեզենը իր որոշ զարդամոտիվներով, օրինակ, շրջանակների մեջ առնված բազմաշար ալիքների զարդանկարով, որոնցով զարդարված է հիդրիաներից մեկի ուսերի զարդադոտին (№ 1861/22) առնչվում է նաև խեցեզենի Թազաքենդի խմբի հետ։

---

[1] Б. А. Куфтин, Археологические раскопки в Трпалети, стр. 80, рис. 89, стр. 399 табл. LXXXII.

[2] G. F. A. Schaeffer, Stratigraphie Comparee et de l' Asie Occidentale, London, 1948 p. 509.

Սակայն կապը մթա III հազարամյակի հետ ավելի ցայտուն է արտահայտվում առյուծազարդ ոսկե թասի միջոցով։ Նրա շուրթից ցած անցնող միահյուսվող զույգ գծիկածածկ զիգզագ ժապավենների շղթան, մթա III հազարամյակի նրբագիծ երկրաչափական զարդանախշերի ամենասիրված զարդամոտիվն է։ Ինչպես վերը հիշատակվեց, նման զիգզագ ժապավենները, որոնք կավամանների շուրթից ցած մի տեսակ ֆրիզի դեր են կատարել, հայտնի են Գառնիից, Դվինից, բազմաթիվ օրինակներով՝ Շենգավիթից, իսկ միահյուսվող գծածածկ զիգզագի անմիջական զուգահեռը դարձյալ Շենգավիթում է (Նկ. 87_{34}, № 1618/35)։

Նույնը կարելի է ասել նաև առյուծներից ցած երիզաժապավենի մասին, որը զարդարված է կետածածկ, հակառակ դասավորությամբ եռանկյունիների շարանով։ Այս զարդանախշի անմիջական զուգահեռները դարձյալ Շենգավիթում են (Նկ. 87_{35}, № 1442/130, № 1330/131)։ Վերջապես առյուծների տարբեր մասերի կետազարդումը, ինչպես վերը տեսանք, շատ սիրված եղանակ է Կիրովականի Քոսի-ճոթերի նույն խեցեղենի երկրաչափական զարդանախշերի համար։

Առյուծազարդ թասն իր երկրաչափական զարդանախշերով և նրանց կատարման եղանակով այնքան հարազատ է մթա III հազարամյակի խեցեղենին, որ եթե այն հայտնաբերված չլիներ դամբանաբլուրի կոմպլեքսում, ապա կարելի էր առանց տատանվելու վերագրել վաղ բրոնզի մշակույթին։

Կիրովական-Թրիալեթիի վերոհիշյալ խումբն իր բազմահարուստ նյութերով կարելի է համարել միջին բրոնզի ծաղկման ժամանակաշրջան և դասական գունազարդ խեցեղենի գագաթնակետ։

Կիրովականին անմիջականորեն հաջորդող օղակը կարելի է համարել Նորաշենի խեցեղենը, որը դեռևս պահպանում է Կիրովականի ատամնաշար, փորելու եղանակով կատարված զարդանախշերը, սակայն գունազարդ հիդրիաներն ավելի ձգված են, զարդանկարը պարզեցված է։ Մյուս կողմից երևան է գալիս նոր տիպի զարդանախշ (եռանկյունիների մեջ ամփոփված բազմաշար զիգզագներ), որն, ինչպես ճիշտ նկատել է Հ. Մարտիրոսյանը, իր ծաղկումն ու տարածումն է գտնում ուշ բրոնզի և նրան հաջորդող դարաշրջաններում[1]։

4. Գառնիի բնակատեղիում հայտնաբերվել են նաև բշիկաշար, կետաշար դրոշմազարդ խեցեղենի բեկորներ (աղ. XXXII, № 1964/4, № 2144/13, № 2099/34 և այլն), որոնք իրենց կատարման եղանակով և զարդամոտիվներով կապվում են Սևանդէսի դամբարանային խեցեղենի (№ 1985/1—8), Ուզերլիկի նմանատիպ խեցեղենի հետ և հավանաբար նույնպես վերաբերվում են միջին բրոնզի վերջին փուլերին։

Իհարկե, շերտագրություն ավող բնակատեղիների ուսումնասիրված չլինելու պայմաններում միջին բրոնզեդարյան նյութերին ամբողջական և ճիշտ գնահատական տալը, ինչպես և թվագրությունը ճշտելը դեռես դժվար է։

Այնուամենայնիվ, Գառնիում հայտնաբերված վերոհիշյալ նյութերը մի անընդմեջ շղթա են կազմում և ապացուցում, որ միջին բրոնզի մշակույթն առաջացել է տեղական վաղ բրոնզեդարյան մշակույթի ամուր հիմքի վրա և նրա ավանդույթների անմիջական շարունակողն է։ Այդ նկատի ունենալով է,

[1] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 73—74 աղ. IV։

որ մենք այս գլխում գուցե և չափից ավելի տեղ ենք տվել խեցեղենի մանրամասն նկարագրությանը և ղուդահեռներին։

Այսպիսով, կարելի է անել այն հետևությունը, որ այս մշակույթն ստեղծող ցեղերը վաղ բրոնզեդարյտնի անմիջական ժառանգորդներն են։

Սակայն գիտության մեջ տեղ են դտել տեսակետներ, որոնցով ցանկանում են հերքել այդ մշակույթների միջև եղած կապը։

Գիտնականների մի մասի կարծիքով Միջին Արևելքում մթա III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբին ծայր են առնում մասսայական գաղթեր և «Քուռ-արաքսյտն» մշակույթը կրող ցեղերն էլ ինչ-որ պատճառով լքում են իրենց բնակատեղիները և այդ մշակույթի հետագա զարգացումն այստեղ բնդհատվում է[1], որ «Քուռ-արաքսյան» բաղմաթիվ բնակատեղիներում այդ մշակույթից հետո կյանքի հետքերը բացակայում են, որպես օրենք մինչև ուշ բրոնզի դարաշրջանը[2]։

Որոշ դիտնականներ հենվելով մի շարք ոչ ճիշտ տվյալների վրա, գալիս են այն եղրակացության, որ սկսած մթա III հազարամյակից «Քուռ-արաքսյան» էլեմենտները դուրս են մղվում և մասամբ կլանվում Առաջավոր-ասիական ցեղերի կողմից[3]։ Սակայն ուսումնասիրությունները գալիս են հերքելու վերոհիշյալ տեսակետները։ Հայկական լեռնաշխարհում ներկայումս մի շարք բնակատեղիներ են հայտնի, որոնցում կյանքը մթա III հազարամյակից հետո չի բնդհատվել, այլ անրնդմեջ հարատևել է մինչև ուշ միջնադար։ Ինչպես վերը տեսանք, նման բնակատեղիներից է Գառնին։ Մուխաննաթ-թափայում նույնպես միջին բրոնզի դունաղարդ խեցեղենին նախորդում է III հազարամյակի էլարի ափպի խեցեղենը[4] և հաջորդում ուշ բրոնզե դարը։ Ջրահովատում վաղ բրոնզեդարյան բազմաշերտ բնակատեղիին հաջորդում է միջին բրոնզի դունաղարդը։ Էլարի ուրարտական ամրոցի ստորին ջերտում մթա III հազարամյակի բնակատեղիի է եղել, չնայած պեղումներ չեն կատարվել, սակայն նրա մակերեսից հավաքված նյութերը ինչպես և դամբարանների պեղումներն ապացուցում են, որ միջին և ուշ բրոնզի շրջանում այն նույնպես բնակեցված է եղել։ Նախիջևանի Քյուլ-թափա I և II-ում դարձյալ մթա III հազարամյակի մշակույթին հաջորդում են միջին բրոնզի, ինչպես և ուշ բրոնզի դունաղարդ խեցեղենով շերտեր[5]։ Ղարաբաղի Գեոյ-թեփե դյուղի բնակատեղիի մակերեսից հավաքած նյութերը վերաբերում են և՛ վաղ բրոնզի մշակույթին և՛ միջին բրոնզին[6]։

Վերջապես Մեծամորում շերտագրական ավյալներն ապացուցեցին, որ սկսած մթա III հազարամյակի սկզբից կյանքն անրնդմեջ շարունակվել է նաև միջին և ուշ բրոնզի ժամանակաշրջաններում։

---

[1] Л. Вулли, Материалы трех глав 2-й части I тома «Истории научного и культурного развития человечества», стр. 101.

[2] J. Mellaart, The End of the Early Bronze Age in Anatolia and the Aegean, American Journal of Archaeology, 62, 1958, N 1, p. 910.

[3] Г. Меликишвили, Возникновение Хеттского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии, ВДИ, 1(91), М., 1965, стр. 25.

[4] Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 44.

[5] О. Абибуллаев, Археологические раскопки в Кюльтепе.

[6] А. А. Иессен, Из исторического прошлого Мпльско-Карабахской степи, стр. 16.

Հիմքից զուրկ է նաև այն տեսակետը, որ «Քուռ-արաքսյան» մշակութային ավանդույթների անմիջական շարունակությունը միջին և ուշ բրոնզի նյութերում դժվար է գանել՝։ Ինչպես վերը տեսանք, Գոռնիի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի մթա III հազարամյակի և միջին բրոնզի նյութերի համեմատական քննությունն ապացուցում է լրիվ հակառակը։ Անցումներ նկատվում են ոչ միայն խեցեղենի ձևերի (օրինակ, ընկույզի տապակի տիպի ներճկումներով թասերը, որոնք սկիզբ են առնում մթա III հազարամյակում և շարունակվում ուշ բրոնզի դարաշրջանում ևս), այլև զարդանկարի թեմատիկ սյուժեների, առանձին մանրամասների կրկնությունների, պաշտամունքային պատկերումների մեջ։ Միջին բրոնզի որոշ դամբանաբլուրներում նոր ձևեր և զարդանախշեր կրող կավամանների կողքին, վերապրուկային ձևով կրկնվում է մթա III հազարամյակին բնորոշ խեցեղենը։ Այդ լավ նկատելի է նաև Թրիալեթիի մի շարք դամբանաբլուրների նյութերում, օրինակ, V դամբանաբլուրում մենք հանդիպում ենք սև փայլեցրած լայնակոս ներճկված զարդանախշերով (ՎՊԹ 9—63—295, 296) և էլարի խեցեղենի տիպի՝ թեք ակոսներով առաջացած, անկյունում ռելիեֆ ելուստով խեցեղենի բեկորներ (ՎՊԹ 9—63—293) կամ սև փայլեցրած խեցի՝ նարնջագույն աստառով, վրան ռելիեֆ ելուստ և իրար մեջ հագած փորագիր անկյունների շարան (ՎՊԹ 3—63—298)։ Հանդիպում են միջամասում ներճկված լայնադիր կանթեր, որոնք բնորոշ են Շենգավթին (ՎՊԹ № 9—63—310), ինչպես նաև մթա II հազարամյակի վերջով թվագրվող Թրիալեթիի դամբանաբլուրին։ Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև VI դամբանաբլուրի նյութերում. դարձյալ նույն Շենգավթի տիպի կանթեր, սև փայլեցրած խեցեղենի բեկորներ՝ զիգզագ բազմաշար կարած զարդանախշերի և ներճկված փոսիկների համադրությամբ (ՎՊԹ № 9—63։386), կամ ներճկված ակոսների և ռելիեֆ ելուստի համադրությամբ (ՎՊԹ № 9—63։287, 288)։ VIII դամբանաբլուրի սև փայլեցրած կավամաններից մեկի վրա, լայնակոս ալիքաձև զույգ գոտիներով առաջացած անկյունները զարդարված են ներճկված փոսիկներով (ՎՊԹ № 9—63—607)։ Ինչպես վերը նշվեց, միջին բրոնզի խեցեղենի ձևերն ու զարդամոտիվները իրենց հերթին փոխանցվել են ուշ բրոնզի մշակույթին։

Մետաղե իրերի նմանությունը երբեք չի կարող հիմք ծառայել Առաջավոր-ասիական ցեղերի ներթափանցումը և «Քուռ-արաքսյան» էլեմենտների դուրս մղվելն ապացուցելու համար։

Ինչպես վերը տեսանք, Հայկական լեռնաշխարհը մետաղի վաղ փուլերից սկսած Առաջավոր-ասիական երկրներին մատակարարել է շինարարական քար, փայտ և ձուլվածքներ, հետևաբար սերտ համագործակցության մեջ է եղել նրանց հետ, ազդել և փոխազդվել է նրանցից և այդ նմանությունները լրիվ բացատրելի ու հասկանալի են։

Չնայած մենք դեռևս չենք կարող ներկայացնել միջին բրոնզի դարաշրջանի բնակարանային կոմպլեքսներն ու նրանց ճարտարապետական ձևերը, սակայն Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիի պեղումները հնարավորություններ են ստեղծել վերականգնելու այն նաև վերոհիշյալ ժա-

---

[1] Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 20։

Տախտակ VIII. Թուխագարդ և ձկնագարդ կնուճներ էլարից։

մանակաշրջանի համար, ապացուցելով, որ մթա III հազարամյակի մշակութային ավանդույթները պահպանվել են ուշ բրոնզի դարաշրջանում ևս։

Կարմիր բլուրի նախասուրարտական շերտում, ինչպես մթա III հազարամյակի բնակատեղիներում, կլորացող պլանով կացարանի շուրջը համախմբված են օժանդակ շինություններ[1]։ Նրանց քարերով կառուցված հիմքի վրա բարձրանում են աղյուսաշեն պատերը։ Այդ բնակարանային կոմպլեքսներին նույնպես բնորոշ են հացահատիկի հորեր, աղորիքներ, սանդեր, սանդկոթեր, կրակարան-օջախ և կուռքեր։ Շատ դեպքերում միանման են հատակը, ծածկը, դռան կտրվածքը, կառուցողական և ճարտարապետական յուրահատկություններ[2]։ Այսպիսով, ինչպես Հ. Մարաիրոսյանն է նկատել, «Հին ավանդույթները պահպանվել և զարգացել են ոչ միայն բնակարանաշինության, այլև նյութական արտադրության և տնտեսության հիմնական հյուղերի, հետևարար նաև դաղափարախոսության ասպարեզում»[3]։

Գիտակոն հիմքից զուրկ է նաև Ջ. Բարնեյի կողմից Թրիալեթիի մշակույթի հակադրելը «Քուռ-արտքսյան» կամ, ինչպես ինքն է անվանում, «Արևելա-անատոլիական մշակույթի հետ»[4]։ Առաջնորդվելով նախօրոք ձևակերպված կոնցեպցիայով, ըստ որի հնդևրոպացի խեթերը պետք է գային Կովկասի վրայով կենտրոնական Անատոլիա, նա աշխատում է Թրիալեթիի դամբանաբլուրների նյութերն ու նրանց թվագրությունը կապել Հյուսիսային Կովկասի և Տրիպոլեի հետ։ Թրիալեթիի դամբանաբլուրների վաղ թվագրություն բիեցնում է խեցեղենի՝ կարևոր եղանակով սահացված զարդանախշերից, որը նա համարում է Հյուսիսի տափաստանային դոտու եկվորների կողմից բերված[5]։ Թրիալեթիի մետաղե իրերի զարդանկարները նույնպես կապում է այդ եկվորների մշակույթի հետ[6]։ Այդ եկվորներին նա համարում է հնդեվրոպացիներ, որոնց մնջ կային և խեթեր[7]։ Նրանց երեալը Թրիալեթիում հնարավոր է համարում մթա 2100—2000 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։ Թրիալեթիի XXIX դամբանաբլուրը համարում է այդ մշակույթի վերջը և այն թվագրում մթա XVIII դարով, ելնելով միայն նրանից, որ դամբանաբլուրում սայլ է հայտնաբերվել, որը նա համարում է հյուսիսային տափաստաններից եկվորների ապացույց, հետևարար նաև Թրիալեթիի բնակչության կազմի մեջ փոփոխության արդյունք[8]։ Քանի որ նման սայլ հայտնաբերվել է նաև Շրեշ բլուրում, դրում է Ջ. Բարնեյը, ուստի այդ եկվորները հասել են մինչև Արաքսի միջին հոսանքը[9]։

Այսպիսով ստացվում է, որ հյուսիսային տափաստանային դոտու բնակիչների գաղթը ծայր է առել դեռևս մթա III հազարամյակի սկզբներից (Շրեշ-բլուրը այդ ժամանակաշրջանով է թվագրվում) և ընդգրկել է Արարատյան դաշտավայրը, որն առնվազն անհեթեթություն է։

Մյուս կողմից, եթե նմանություններ կարելի է տեսնել Թրիալեթիի և

---

[1] А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, стр. 25.

[2] Նույն տեղում, էջ 29։

[3] Նույն տեղում։

[4] C. Burney, Eastern Anatolia..., p. 175.

[5] Նույն տեղում, էջ 176, 178։

[6] Նույն տեղում։

[7] Նույն տեղում։

[8] Նույն տեղում։

[9] Նույն տեղում։

Տրիպոլեի որոշ զարդամոտիվներում (որը քիչ հավանական է), ապա այն կարելի է դիտել միայն որպես մշակութային փոխազդեցությունների հետևանք։

Ինչպես վերը տեսանք, Թրիալեթիի դամբանաբլուրների նյութերը բազմաթիվ թելերով կապված են III հազարամյակի մշակույթի հետ։ Վաղ բրոնզի III փուլով թվագրվող դամբանաբլուրների (XI, XLVI, Թեթրիծզարոյի 1957 թ. պեղումները) բարձրարվեստ, կարելու եղանակով կատարված երկրաչափական զարդանախշերով խեցեղենը ոչ թե Հյուսիսի հետ է կապվում. այլ իր ամուր արմատներն ունի Կիրովականի, մթա III հազարամյակի հուշարձաններում, Շենդավթում, իսկ Բեդենիի խեցեղենը համատեղում է նրբարդիծ-կետաձածկ զարդանախշերով խեցեղենը՝ էլարի տիպի ներճկված փոսիկներով խեցեղենի հետ։

Թրիալեթիի դունաղարդ խեցեղենը, որը Հայկական լեռնաշխարհի գունազարդի կրկնությունն է և կարծես միևնույն բրուտանոցում լինի պատրաստված, Ջ. Բարնեյը համարում է պարսկական[2], սակայն ինքը ևս կասկածում է նրա պարսկական ծագման վրա, զարմանում, թե այդ արդյոք որտեղի՞ց է ստացվել Թրիալեթի[3]։

Թրիալեթիում հայտնաբերված մետաղե իրերը ավելի շուտ կապվում են Հարավի և Հայկական լեռնաշխարհի, Կենտրոնական Անատոլիայի հետ, քան Հյուսիսային Կովկասի։

Այսպիսով, ինչպես վաղ բրոնզի, այնպես էլ միջին բրոնզի ղարաշրջանում, Հայկական լեռնաշխարհը՝ Թրիալեթին ներառյալ, մշակութային մի ընդհանրություն են ներկայացրել, ունենալով իրենց տեղական բնորոշ յուրահատկություններ։ Միջին բրոնզի ղարաշրջանում ևս Թրիալեթին լինելով այդ յայնածավալ մշակութային միասնության ծայրամասը, անշուշտ պետք է կրեր Հյուսիսի որոշ աղդեցություն։

Թրիալեթիի ասեղնաշար ղրոշմիչով կատարված և զարդանախշերով ընդհյուղված խեցեղենը ունի դեղարվեստական բարձր արժանիքներ և կատարելության է հասցված։ Նրա կողքին մեծ զարդացում է ապրում փայլեցման եղանակով զարդանախշված խեցեղենը, որն արտակարգ նրբությամբ է բնորոշվում և մեծ առատությամբ հանդիպում Թրիալեթիի միջին բրոնզի ղարաշրջանի համարյա բոլոր դամբանաբլուրներում։ Հայկական լեռնաշխարհում այն հազվադեպ է, մինչև այժմ հայտնաբերվել է միայն Լճաշենի VI դամբանաբլուրում և իր բնույթով ավելի շուտ կապվում է ուշ բրոնզի մշակույթի հետ։ Թրիալեթիում չափազանց սակավ է դունաղարդ խեցեղենը, սակայն Հայկական լեռնաշխարհում այն բացարձակ գերակշռություն է կազմում և հայտնի է իր տարատեսակներով։

Այսպիսով, տեղական, վաղ բրոնզեդարյան մշակույթի ամուր հիմքերի վրա բարձրացված միջին բրոնզեդարյան մշակույթի կրողներն անշուշտ մթա III հազարամյակի տեղաբնիկների ժառանգորդներն են և միևնույն էթնիկ նաղմն են ունեցել։ Որոշ փաստեր հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները խուրրիտներն են եղել։

Մթա II հազարամյակի սկզբներին Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում նշանավոր դեր է կատարել խուրրո-Միտանական պետությունը, որի

[1] C. Burney, նշվ. աշխ., էջ 176։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 178։

քաղաքական կենտրոնը տեղադրում են Վերին Միջագետքում և Վանա լճի շրջանում[1]։ Սակայն աղբյուրները հնարավորություն են ընձեռում խուրրիտների երկիրը գիտել որպես մի առանձին թագավորություն, հարևան Միտաննիին[2]։ Ուսումնասիրողների մի մասը (Հ. Վինկլեր, Ֆր. Բիլաբել, Ա. Գյոտցե) խուրրիտների հիմնական օջախը, նրանց քաղաքական կենարոնը տեղադրում է Միտաննիից հյուսիս-արևելք՝ Վանա լճի շրջանում[3]։ Հայտնի է, որ խուրրիական թագավորությունը իր ծաղկման գագաթնակետին է հասնում մեթա II հազարամյակի սկզբին և, ինչպես տեսանք, նրա գլխավոր օջախներից մեկը գտնվել է Հայկական լեռնաշխարհում՝ Վանա լճի շրջանում։ Սակայն մի շարք գրավոր փաստեր հաստատում են խուրրիտների գոյությունը դեռևս մեթա III հազարամյակում։ Խուրրիների գոյությունը ակկադական շրջանում ապացուցվում է խարուր գետի հովտում խուրրիական լեզվով գրանրված աղյուսակներով[4]։ Խուրրիները սուրարի անվան տակ Միջագետքում երևում են մեթա III հազարամյակից սկսած[5]։ Սիրիա-Պաղեստինում, ապա Նուզիում (Կերկուկ) խուրրիտական տարրը մեծ քանակությամբ երևան է գալիս մեթա II հազարամյակի սկզբներին, երբ նրանց կոդքին կային սեմիական ծագում ունեցող ցեղեր, որոնք այդ վայրերի ավելի հին բնակիչներն էին[6]։

Փաստորեն վերոհիշյալ վայրերում խուրրիները եկվորներ էին։ Նուզիում խուրրիների կողքին ապրում էին նաև Զագրո-էլամական ցեղախմբեր և, ինչպես պեղումներն են ապացուցում, նույնն, մինչև խուրրիների երևան գալը, մեթա II հազարամյակի սկիզբը, ակկադական մշակույթի տարածման շրջան էր[7]։

Այսպիսով, վերոհիշյալ շրջաններում խուրրիները, ինչպես տեսանք, մասսայարար երևան են գալիս մեթա II հազարամյակի սկզբներին։ Մյուս կողմից այն փաստը, որ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթը կրող ցեղերը իրոք մեթա III հազարամյակի կեսերից սկսած տարածվում են Սիրիա-Պաղեստին, հնարավորություն է տալիս մատծելու, որ խուրրիտները հավանարար Հայկական լեռնաշխարհի տեղարնիկներն են և այստեղից են տարածվել վերոհիշյալ շրջանները։

Վանա լճի շրջանը նույնպես բավականաչափ խիտ էր բնակեցված մեթա III հազարամյակում և կազմում էր այդ մշակույթի անրաժանելի մասերից մեկը, մշակույթ, որի սահմանները ընդգրկելով Վանա լճի շրջանները, հասնում էր մինչև Իրանական Ադրրեջան (Գեոյ-Թեփե, Յանիկ-Թեփե), հյուսիսում՝ Թոեխք (Թրիալեթի), հյուսիս-արևմուտքում ընդգրկելով Էրզրումի շրջանը, տարածվում էր մինչև Սվաղ (Զարա և Հաֆիկ) և Մալաթիա (Արդուվան, Հնքիմիան), մշակույթ, որի տարածման սահմանները հաստատվում են միայն Հայկական լեռնաշխարհին բնորոշ վաղ բրոնզեդարյան միատարր սև փայլեցրած խեցեղենով։

---

[1] Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, Z. 93.

[2] A. Goetze, Hethiter, Churriter und Assurer, Oslo, 1936, էջ 102.

[3] Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 93։

[4] C. Burney, Eastern Anatolia., p. 166։

[5] Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 102։

[6] Նույն տեղում, էջ 99։

[7] Նույն տեղում, էջ 99—100։

Սակայն Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների խուրրիտ լինելու լավագույն ապացույցներից մեկը «վիշապի» պաշտամունքն է, որի հուշարձանները ներկայումս հայտնի են Ճորոխի ավազանից մինչև Արագածի լանջեռը ներառյալ։

«Վիշապը» որպես երկրորդական աստվածություն հիշատակված է Բողազ-Քյոյում և Ռաս-Շամրայում հայտնաբերված խուրրիտական տեքստերում[1] վիշաիշապ (վիշաշապ) ձևով, որը սղվելով դառնում է վիշապ[2]։

«Վիշապը» որպես խուրրիտական աստվածություն դարձյալ Wišaišaphi ձևով հանդիպում է նաև խեթական աղբյուրներում[3]։

Ռաս-Շամրայի տեքստերից հետևում է, որ չնայած վիշապը երկրորդական տեղ է գրավում, սակայն հանդիսանում է համախուրրիտական դիցարանի աստվածություն[4]։

Գառնիի միջին բրոնզի դարաշրջանի կավամանների չափերը սանտիմետրերով

№№	Իրի անունը, նկարագիրը	Ինվենտարի համարը	Բարձրությունը	Տրամագծերը			Վիզի բարձրությունը
				բերանի	իրանի	հատակի	
1.	Կճուճ սև փայլեցրած, հորիզոնական զոլագծով	2144/49	24,5	—	21	9	7,[illegible]
2.	—»— —»—	2144/50	21	12	21	9,5	7,5
3.	Կճուճ շագանակագույն փորագիր զարդերով	2144/51	17	12	18	7	2,5
4.	Թասեր խոր, լայնաբերան, գորշագույն	2144/52—54	13	20	22	9,5	—
5.	Թաս գունազարդ, խոր	2144/59	12,5	16,5	20	10	—
6.	Պնակ ձվաձև, գորշագույն	2144/56	7,5	8	14	8	—
7.	Գավաթ երկկոնաձև իրանով	2144/55	11,5	17	18	7	—
8.	Թաս խոր, գորշագույն	2100/5	11	16	20	8,5	—
9.	—»— —»—	2100/6	11	11	19	7	—
10.	—»— —»—	2100/7	12	—	20	8	—
11.	—»— —»—	2100/8	12,5	17	20	10,5	—
12.	—»— —»—	2100/9	12,5	—	18	9	—
13.	Կճուճ գորշագույն, հասարակ	2100/4	18	11	20	7,5	—
14.	Կճուճ կրկնահարկ, մոխրագույն	2100/11	17,5	9	19	8	—
15.	Կճուճ գնդաձև, գունազարդ	2100/1	23	14,5	25	12,5	4,5
16.	—»— —»—	2100/2	25	13,5	24	12	3
17.	—»— —»—	2100/3	18,5	12	19	10	3,5
18.	Թաս խոր, գունազարդ	2098/4	14	22	26	13,5	—
19.	Հիդրիա, գունազարդ, թռչնազարդ	1965/224	38	18	32	16	—
20.	Կճուճ, շագանակագույն, կետագիծ զարդերով	1965/225	22,5	11	19,2	8,5	4,5
21.	Թաս խոր, գնդաձև, շագանակագույն	1963/83	13	17	21	8	6

[1] Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 114։

[2] Նույն տեղում. էջ 115։

[3] E. Laroche, Recherches sur les noms des Dieux hittites, Paris. 1947, տե՛ս աստվածանունների ցանկը, Keilschrifttexte aus Boghazkoi, V տետր, արձանագրություն 2, սյունակ III, տող 4։

[4] J. Fridrich, Kleine Beitrage zur churritischen grammatik, „Mitteilungen der Vorderasiatisch-agyptischen Geselschaft", XLII, 2, Leipzig, 1939. Z. 47.

Հայկական լեռնաշխարհում «վիշապի» պաշտամունքը, ինչպես V գլխում կտեսնենք, սաղմնավորվելով դեռևս վաղ երկրագործական տնտեսության պայմաններում, մթ. II հազարամյակում հիշատակվել է որպես երկրորդական աստվածություն և դարերի ընթացքում «վիշապ» անունը պահպանվելով հասել է մեզ։

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի տեղարնիկ ցեղերի ստեղծած մշակույթը տնտեսության և տեխնիկայի առաջընթացի պայմաններում բարգավաճելով և նոր ձևեր ընդունելով հարատևել է դարեր։